

# Երեսնամյա այսպիսի

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա

Նոյեմբերի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի հանդիսություններին:

Այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե Ծ. վրդ. Անանյանը, Հայրապետի գավազանակիր Աղան արք. Երնջակյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը:

Նոյեմբերի 22-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, հանդիպում ունեցավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ:

Հանդիպմանը ներկա էին Նաթան արք. Հովհաննիսյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, Շահե Ծ. վրդ. Անանյանը, Աղան արք. Երնջակյանը եւ Վահրամ քնն. Մելիքյանը:

Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ հավատավոր հայոց հոտի անուկից շնորհավորելով Կիրիլ Պատրիարքին ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի առիթով՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նրան փոխանցեց իր եղբայրական սերն ու բարեմաղթանքները՝ քաջառողջություն եւ հովվապետության բեղուն տարիներ մաղթելով Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Կիրիլ Պատրիարքի հովվապետության տարիներին շարունակվեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու առաջընթացն ու հոգեւոր զարթոնքը՝ ի նպաստ ողջ քրիստոնյա աշխարհի:

Հայոց Հայրապետը մեծապես կարեւորեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի՝ քույր Եկեղեցիներին եւ աշխարհի տարբեր կողմերում գտնվող քրիստոնեական համայնքներին ցուցաբերվող գորակցությունը՝ մասնավորապես անդրադառնալով Մերձավոր Արեւելքի երկրներում տիրող ծանր իրավիճակին:

Նորին Սրբությունն այս իմաստով գոհունակություն հայտնեց նաեւ, որ Ռուս Եկեղեցու



ցու շովվապետի ուշադրությունից անմասն չէ նաեւ Այսրկովկասի տարածաշրջանը՝ առանձնակի գնահատելով Կիրիլ Պատրիարքի միջնորդական ջանքերը՝ տարածաշրջանում խաղաղության վերահաստատման ուղղությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական կապերին եւ գործակցությանը՝ համահունչ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Ներկա աշխարհի իրողությունների առջեւ կարեւորվեց ջանքերի համատեղման եւ գործակցության առավել ամրապնդման անհրաժեշտությունը՝ Եկեղեցիների եւ ժողովուրդների առջեւ ծառայած տարբեր մարտահրավերներն ու խնդիրները դիմագրավելու համար:

Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի հայոց թեմերի եւ տեղի հայության հանդեպ

մշտապես ցուցաբերվող հոգեւոր խնամքի եւ հայրական հոգածության համար իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Կիրիլ Պատրիարքին:

Իր հերթին ողջունելով Նորին Սրբությանը եւ Նրան ուղեկցող պատվիրակությանը՝ Կիրիլ Պատրիարքը շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սրբության համար հատկանշական հոբելյանի այս օրերին իր ներկայության եւ մասնակցության համար:

Կիրիլ Պատրիարքը գոհունակությամբ նշեց, որ երկու ժողովուրդներին միավորող անցյալի նվիրական կապերն այսօր էլ շարունակում են զորանալ եւ պտղաբերել: Նա ընդգծեց, որ անցյալում հայ-ռուսական հարաբերություններն անցել են թե՛ դժվարությունների եւ թե՛ հեռուսական եղբայրական համագործակցության միջով:

Նոյեմբերի 22-ի երեկոյան Զրիստոս Ամենափրկիչ տաճարի Եկեղեցական ժողովների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի առիթով կազմա-

Հայ Առաքելական Սբ Եկեղեցու անուկից շնորհավորելով Նորին Սրբությանը՝ ծննդյան 70-ամյա հոբելյանի նշանակալի առիթով՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց. «Մեք ճանաչում ենք Ձեզ՝ որպես Զրիստոսի եւ Նրա Սբ Եկեղեցու հավատարիմ ու անձնվեր ծառայի: Զրիստոսի Սբ Եկեղեցուն սպասավորությանը Դուք կոչվեցիք խորհրդային տարիներին, երբ բազմազգ պետության ողջ տարածքում հալածվում էր հավատքը, տարատեսակ ճնշումների էին ենթարկվում Եկեղեցին ու հոգեւորականը: Աստվածներժողության դժվարին ժամանակներում Դուք անվավազ նախանձախնդրությամբ ծառայեցիք Ռուս Ուղղափառ Եկեղեցու պայծառությանը: Բարի ներդրում բերեցիք հավատացելից հոգեւոր կյանքի զորացմանը՝ երկարամյա պատասխանատու բարձր ծառայություն իրականացնելով կրթական եւ միջեկեղեցական ոլորտներում, մեծապես կարեւորեցիք Եկեղեցականների նոր սերնդի պատրաստությունը, ինչպես նաեւ երկխոսության խթանումը Եկեղեցիների միջեւ: Դուք շարունակեցիք եռանդուն գործունեությունը՝ ի խնդիր հավատավոր Ձեր հոտի հոգեւոր կյանքի զորացման ու առաջընթացի՝ կոչվելով հայրապետական բարձր ծառայության: Ամենքս այսօր ականատես ենք Ռուս Ուղղափառ Եկեղեցու պայծառության, Եկեղեցական սպասավորության առավել արդյունավետությանը: Ձեր հայրապետության տարիներին եւս Դուք նշանակալի ավանդ բերեցիք միջեկեղեցական ասպարեզում՝ ջատագովը լինելով աշխարհում քրիստոնեա-



կերպված պաշտոնական համերգին:

Միջոցառմանը ներկա էին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինը, Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը, քրիստոնեական տարբեր Եկեղեցիների Հովվապետեր ու պատվիրակություններ, այլ կրոնների ներկայացուցիչներ, Ռուս Եկեղեցու Սինոդի անդամներ եւ բարձրաստիճան Եկեղեցականներ, դիվանագետներ, պետական կառույցների, հասարակական եւ բարեգործական կազմակերպությունների ղեկավարներ, գիտության եւ մշակույթի գործիչներ:

Համերգի ավարտին տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն իր շնորհավորական ուղերձը հղեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին:

կան արժեքների պահպանման, քրիստոնյաների իրավունքների պաշտպանության եւ միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունների առավել արդյունավորման:

...Միջոցա՛լ եղբայր ի Զրիստոս, ուրախությամբ ենք հիշում Ձեր այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածին: Մեր հանդիպումները, փոխայցերը հատկանշվել են բարեկամությամբ ու բարյացակամությամբ, որոնցով պսակված են մեր ժողովուրդների դարավոր եղբայրությունն ու փոխհարաբերությունները: Գոհունակություն է հաստատել, որ Ձեր հայրապետության տարիներին առավել ամրապնդվել են մեր Եկեղեցիների եւ հավատակից մեր ժողովուրդների եղբայրական կապերն ու գործակցությունը, որի համար այսօր գոհաբանական աղոթք ենք վերառաքում առ Բարձրալուսը:

Շարունակությունը՝ էջ 2



# Ամենայն Չայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա



Սկզբը՝ էջ 1

Վատահ ենք, որ բարեկամության այդ նույն ոգին պիտի շարունակի թագավորել մեր Եկեղեցիների հարաբերություններում՝ փոխըմբռնումով, սիրով ու փոխադարձ հարգանքով նոր արդյունքներ արձանագրելու քրիստոսապատվեր առաքելության մեջ, «Տիրոջն արժանի եւ ամեն ինչում Նրան հաճելի ձեռով, բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու» (Կող. 1. 9-10)»:

Վեհափառ Չայրապետը նաեւ շնորհակալություն հայտնեց Կիրիլ Պատրիարքին՝ Ռուսաստանում Չայ Եկեղեցու թեմերի նկատմամբ դրսեւորվող հայրական վերաբերմունքի, ինչպես նաեւ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջնորդական առաքելությունը շարունակելու եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի ու Չայոց

Յովվապետի հետ միասին եռակողմ հանդիպումներ կազմակերպելու համար:

Ամենայն Չայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ եղբայրության, սիրո ոգին եւ գործակցության բարի արդյունքները շարունակեն զարդարել Ռուս Ուղղափառ եւ Չայ Առաքելական Եկեղեցիների բարեկամությունը՝ քաջալերելով երկու ժողովուրդներին միասնաբար պարելու եւ արարելու՝ որպես Աստծո որդիներ եւ որպես հավատակից եղբայրներ:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Մոսկվայի եւ Չամայն Ռուսիո Պատրիարքին մաղթեց քաջառողջություն, արեւշատություն եւ անսպառ կորով ու քաջեռանդություն՝ հայցելով, որ Տերը հանապազ գորակից ու աջակից լինի նրան՝ հովվապետության տարիները զարդարելով նորանոր հաջողություններով ու ձեռքբերումներով՝ ի փառս Աստծո եւ ի պայծառություն Ռուս Ուղղափառ Եկեղեցու:

այ քերականագիտության մեջ վաղուց ի վեր առանձնացվել ու բնորոշվել է բայասեռի քերականական կարգը, ուսումնասիրվել են տարբեր սեռերի բայերի ձեւաբանական եւ շարահյուսական առանձնահատկությունները, քննվել է կրկնասեռության դրսեւորումը, ուսումնասիրվել են սեռային փոփոխությունները եւ այլն: Իհարկե, շատ հարցերի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ ու մոտեցումներ: Դրանք հատկապես վերաբերում են կրկնասեռության ըմբռնմանը, սեռային տեղաշարժերին, արծույթային դասակարգումներին եւ այլ Սակայն կա նաեւ մեկ այլ հարց, որը, թվում է, այս ամենի մեջ ամենահստակն է: Դա հենց բայասեռի՝ որպես քերականական կարգի ըմբռնումն է: Մենք այստեղ կանդադրանանք միայն դրան: Սա էլակետային խնդիր է, որի վրա կառուցվում են մնացած դրույթները, ուստի առաջին հերթին հենց դա պետք է լուծվի:

Բային եւ մասնավորապես բայասեռին վերաբերող ուսումնասիրությունների մեծ մասում սովորաբար նշվում է, որ ժամանակակից հայերենում բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական եւ չեզոք: Ներգործական են այն բայերը, որոնք կարող են ստանալ ուղիղ խնդիր լրացում: Կրավորական են այն բայերը, որոնք կարող են ստանալ ներգործող խնդիր լրացում: Իսկ չեզոք բայերը նշված երկու տիպի լրացումները չեն ստանում: Իհարկե, սա ընդհանուր եւ համեմատաբար տարածված ըմբռնումն է: Շատ ուսումնասիրողներ առանձնացնում են անցողական եւ անանցողական բայեր, հետո նոր միայն առանձնացնում են թատեսակներ: Տարբեր կարծիքներ կան նաեւ պատճառական եւ կրավորակերպ չեզոք բայերի մասին եւ այլն: Մենք այստեղ եղած կարծիքներին գրեթե չենք անդրադարձնա, քանի որ դրանք

# ԲԱՅԱՍԵՐԻ ԸՄԲՐՆՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

քննությունն այլ խնդիր է: Մեր նպատակը միայն ընդհանրապես բայասեռի՝ որպես քերականական կարգի բնութագրումն է: 3ր. Աճառյանը բայի սեռը քննելիս գրում է. «Բայի սեռ ասելով հասկացվում է այն առնչությունը, որ կա կատարված գործողության եւ ենթակայի միջեւ: Այսօր մենք այս առնչությունը ըմբռնում ենք չորս ձեռով. 1. ենթական գործում կամ ազդում է մի ուրիշի վրա, եւ այդ ուրիշը ենթարկվում է նրան. ինչպես՝ ծեծել, կոտրել, սպանել: Սրանք կոչվում են ներգործական բայ: 2. ենթական ազդվում է մի ուրի-

վել: Սրանք կոչվում են կրավորակերպ չեզոք կամ պարզապես կրավորակերպ» (3ր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հատոր 4, ՅՄՍՐ ԳԱ հրատ., Եր., 1959, էջ 72-73): Կատարելով այս ընդհանուր բնորոշումը՝ 3ր. Աճառյանը միանգամայն իրավացիորեն նշում է. «Չարքը ներկայացնելով այսպես՝ սեռի գաղափարը չափազանց պարզ է ու հասկանալի, բայց քննելով մի քիչ ավելի մանրակրկիտ կերպով՝ տեսնում ենք, որ նա դառնում է բավական խառնակ եւ շփոթ» (նույն տե-

կան լինելու վերաբերյալ: Իսկ ի՞նչ է քերականական կարգը: Կան քերականական կարգի տարբեր սահմանումներ: Գ. Ջահուկյանը քերականական (մասնավորապես ձեւաբանական) կարգը հետեւյալ ձեւով է սահմանում. «Ձեւաբանական կարգ (կատեգորիա) ասելով պետք է հասկանալ արտահայտության պլանում (ձեւակառուցում) տարբերվող եւ բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող երկու կամ ավելի մասնիկային միավորների (քերականության մասերի) խմբերը» (Գ. Ջահուկյան, Չայոց լեզվի զարգացումը եւ կառուցվածքը, «Միտք» հրատ., Եր., 1969, էջ 120): Իսկ Էդ. Աղայանը քերականական կարգն այսպես է բնորոշում. «Այն բոլոր քերականական իմաստները, որոնք լեզվի մեջ ունեն իրենց քերականական արտահայտությունը, կոչվում են քերականական կարգեր (կատեգորիաներ)» (Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ հրատ., 1987, էջ 483):

Քերականական կարգի առանձնացման համար առաջին հերթին կարեւոր է իմաստային-քերականական հակադրությունը: Օրինակ՝ տուն բառը համարվում է եզակի, որովհետեւ կա նրան իմաստով եւ քերականորեն հակադրվող տներ հոգնակի ձեւը: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը. «...քերականական կարգի անդամները երկուսից պակաս լինել չեն կարող: Այսինքն՝ եթե մի լեզու ունի միայն մեկ հոլովական ձեւ, ուրեմն հոլով չունի ընդհանրապես. եթե ունի միայն մեկ ժամանակային ձեւ, նշանակում է ժամանակի քերականական կարգ չունի ընդհանրապես եւ այլն» (Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., 2002, էջ 9):



չից կամ ենթարկվում է նրան. ինչպես՝ ծեծվել, սպանվել: Սրանք կոչվում են կրավորական:

3. ենթական գտնվում է մի որեւէ վիճակի մեջ՝ առանց ուրիշի ներգործության. մեռնել, քնել, գարթնել. կամ կատարում է մի գործողություն, որին չի ենթարկվում ուրիշը. ինչպես՝ քայլել, լողալ եւ այլն: Սրանք կոչվում են չեզոք:


4. Վերջապես կա մի այնպիսի վիճակ, ուր ենթարկվում է, թե ենթական գործող եւ ազդող է միանգամայն, այսինքն՝ գործողությունը կատարում է ինքն իր վրա. ինչպես՝ լվացվել, սանրվել, հագն-

վել: Եվ, իրոք, առաջին հայացքից թվում է, թե այս բաժանումը շատ հստակ է, սակայն, ինչպես նշվեց, կան մի շարք վիճահարույց իրողություններ՝ կապված կրկնասեռությանը, սեռային անցումներին եւ այլն, որոնց էլ անդրադառնում է Աճառյանը: Սակայն, մեր կարծիքով, կա եւս մեկ խնդիր, որը հանգամանակից քննության կարիք ունի:

Չայտնի է, որ բայասեռն առանձնացվում է որպես քերականական կարգ, թեեւ տարակարծություններ կան այդ կարգի ձեւաբանական կամ շարահյուսա-

## Կրատարակվել է

### Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2016 թ.)



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Չայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել «Սուրբ հայրերի վարքն ու կենցաղավարությունը» ժողովածուի առաջին հատորը:

Ժողովածուի ներկա աշխարհաբար թարգմանությունն իրականացվել է միայն ժողովածուի՝ «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց»-ի (Վեներտիկ, 1855) կորիզը կազմող «Բանք եւ պատմութիւնք հարանց» հատվածի համար: Թարգմանությունը կատարվել է Չրատարակչական բաժնի տնօրէն Շահեծ. վրդ. Անանյանի, Սիրանուշ (Նանա) Գրիգորյանի եւ Վաղարշակ Թանգամյանի կողմից:

19 գլխում ամփոփված վանական-անապատական բարոյախոսությունը յուրահատուկ թեմատիկ ուղեցույց է բոլոր նրանց համար, ովքեր փափագում են անապատական հայրերի հոգեւոր փորձառությանը ծանոթանալու եւ դրանք առօրյա կյանքում իբրեւ լուսաբանող օրինակներ ունենալու:

Յուրաքանչյուր գլխում կատարվել են համապատասխան պարբերությունների թվաբաժանումներ՝ ընթերցանությունն ավելի դյուրացնելու համար: Թարգմանվել են թե՛ առաջին, թե՛ երկրորդ թարգմանության բնագրերը, ինչպես նաեւ երկրորդ թարգմանության «մնացորդը»-ը՝ իբրեւ «Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից»: Թարգմանիչների բուն նպատակն է եղել ընթերցողին հասանելի դարձնել գրաբար թարգմանությամբ մեզ հասած այս ժողովածուի բոլոր հատվածները:

Գիրքը հրատարակվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

Չրատարակչական բաժնի կողմից հրատարակվել է նաեւ 2017 թվականի սեղանի օրացույցը: Ամենօրյա ժամատախտակների հուզազեղ ալմաստային բացատրություններ է տալիս բոլոր տոների եւ սրբոց հիշատակության օրերի վերաբերյալ:



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԱ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՏԱՎՈՐ

# ՇԻՐԱՅՎԱՆ ՔՎՈՅՎԿՆԵՐԻ ՎՇԽԱՐԴԸ

Սկզբը՝ թիվ 14-21

Այս կրկնությունն էլ իր գաղտնի խորհուրդն ունի: Հայոց պետական լեզվին, ինչպես եւ մյուս ազգային հանրապետությունների եւ ինքնավար կառույցների ազգային լեզուներին իսկապես լուրջ վտանգ էր սպառնում 1977 թ. բրեժնեյան սահմանադրությամբ, սակայն նախքան հոկտեմբերի 7-ին այն ընդունելը՝ դեռեւս քննարկման փուլում, Հայաստանի եւ մյուս միութենական որոշ հանրապետությունների մտավորականության դժգոհությունն ու բողոքի ալիքը կասեցրին այդ վտանգը:

Ահա ինչու էր Շիրազը գրել այս քառյակներն իրենց՝ այն ժամանակներում ոչ բարձրաձայնելի գաղտնագիր կարգախոսով, գրել էր մանավանդ վտանգված «հայոց լեզվին ճամփա բանալու» համար:

**Փրկությունն քեր ինձ, Աստված իմ, պիտի բախվեմ սատանային...**

Գաղտնագիր կարգախոսը երկու քառյակներում էր դրվել մի պարզ նպատակով. եթե մեկը նկատեն ու գրքից հանեն, գոնե մյուսը մնա: Այս դեպքում, սակայն, երկուսն էլ բարեբախտաբար չեն նկատվել ու չեն հանվել գրքից:

Խորհրդային գրաքննությունը եւ հենց Շիրազի հանդեպ գործադրվող գրական նենգանորոք քաղաքականությունը բանաստեղծին վարժեցրել էին նման միամիտ գզուշավորության, որը հաճախ դառնում էր նաեւ մտքի կամ բանաստեղծական պատկեր-

րի կրկնությունների պատճառ, իսկ սա էլ պետական մակարդակով բերում էր չարամիտների հերթական մեղադրանք-կշտամբանքը՝ «Շիրազը վաղուց սպառնել է իրեն եւ զբաղված է ինքնակրկնությամբ»: Այնինչ բանաստեղծն իր հավատն էր ամրապնդում, աղոթքն ու կարգախոսն էր կրկնապատկում տարբեր ժանրի գործերում՝ պոեմներում, բանաստեղծություններում ու քառյակներում: Եվ այդ ամենի առանցքն ինքնագոհության մղող շիրազյան մի գլխավոր մտասերումն էր՝

**Որ չդիպչեն հայոց լեզվին ժամանակներն անկշտում:**

Հայոց լեզվին սպառնացող վտանգներն ավելի էին ամրակայում հավատը նրա հավերժության հանդեպ: Եթե «Հայոց հրաշքը» պոեմում հավատում եւ հավատացնում էր, թե՛

*Ճատ մորիկներ եկան անցան, Այս էլ կանցնի,  
Փոթորիկներ եկան անցան, Այս էլ կանցնի,  
Հայակործան դարեր անցան, Այս էլ կանցնի,  
Վկա Մասիսն իմ անկործան, Այս էլ կանցնի,-*

սպա հետագայում գրած քառյակներն առավել ըմբոստ են եւ լավատեսական՝ բռնակալների անցողիկության եւ հայ ազգի հավիտենության հանդեպ հավատի շեշտադրումներով...

*Բռնակալներ եկան անցան, Ելի կզան ու կանցնեն, Եվ ազգն էլի հայ կմնա, ինչ-*

*քան էլ զան ու անցնեն, Ով էլ դեռ զա՛ պիտի երթա անցածների կամրջով,-  
Չի խոնարհիլի Մասիսն հավերժ,- թեկուզ դեռ զան ու... չանցնեն:  
302*

Հավատի խնդիրն արծարծել են աշխարհի բոլոր մեծ մտածողները թե՛ Արեւելքում, թե՛ Արեւմուտքում: Բուդդիստ միանշանակ հավատացյալ կամ աստվածամերժ համարել չենք կարող, սակայն գրեթե նույն բովանդակությունն ունենին Նարեկացու երկնառաք աղոթքները, Օմար Խայյամի վեճը Աստծու եւ Հովի. Թումանյանի ներքին ընդվզումը «հող ու ծաղիկ տվողի» կամ «Անճառ մին»-ի հետ: Բնության պաշտամունքով աստվածայինին հասնելու մեծաբնեցյան «համաշխարհիկ բարբախումները», Տերյանի ու Չարենցի պատկերային մտածողության համակարգում հայության ճակատագրի եւ խաչյալ Հիսուսի ու «յոթնապատիկ խոցված Տիրամոր» համադրումները եւս նույն ուղիով են վերաբերում: Նորությունն չէին նաեւ մարդկային եւ աստվածայինի շիրազյան արծարծումները, սակայն նա բոլոր նախորդներից տարբերվում էր հարցադրման եղանակով ու պատասխանի ինքնատիպությամբ:

«Մարդուց վեր բանի» հավատալու եւ աստվածային կատարելությանը հասնելու Նարեկացիական ձգտումը Հովի. Շիրազն ունեցել է ողջ ստեղծագործական կյանքում: Բայց եթե «Բիբլիականներում»՝ մայր «Բիբլիական», «Աստծո գլուգործոցը», «Ինքներ-



զանք համամարդկային» եւ այլն, «Անի» պատմափիլիսոփայական ու մանավանդ «Թնդրակեցիները» ազգային-համամարդկային պոեմներում, ինչպես նաեւ նույն խնդիրն արծարծող «Մայր բնություն, Աստծու քնար վիթխարի» ու այլ բանաստեղծություններում հեղինակն ուներ ծավալվելու, ինքնարտահայտվելու լայն ու անկաշկանդ հնարավորություններ, ապա քառյակի ժանրաձեւում փոխվում են «խաղի կանոնները». սեղմ ծավալը պարտադրում է խայրամական ու թումանյանական բանածեւային մտածողություն, խստագույն ու ճաշակավոր բառընտրություն, խաչքարային, մանրանկարչական ու ասեղնագործական արվեստին բնորոշ զուսպ միջոցներով ասելիքը պատկերավոր ձեւակերպելու, առածի ու թեւավոր խոսքի խտությամբ արտահայտելու հմտություն:

Այդպես է, իհարկե, եւ մյուս քառյակների պարագայում, ուր **Աստված-սատանա-մարդ-բնություն** հարաբերությունը համալրվում է **սեր** եւ **ատելություն**, **զգացմունք** եւ **բանականություն**, **գեղեցկություն** եւ **այլանդակություն**, **վեհություն** եւ **ստորու-**

**թյուն**, **հայ** եւ **թուրք** հակադրություններով, ինչպես նաեւ **հայություն** եւ **մարդկություն**, **Հայաստան** եւ **աշխարհ**, **սփյուռք** եւ **հայրենիք** հարաբերությունների բարձրարվեստ արտացոլմամբ: Հենց այս հակադրությունների ու համադրությունների, երկրայինի մեջ երկնայինը, մայրականի մեջ հայրենի սրբությունները տեսնելու եւ գրեթե միանական ու համաժամանակյա պատկերումն է Հովի. Շիրազի ինքնատիպությունը եւ բերած նորությունը հայ բանաստեղծության մեջ:

Գրիգոր Նարեկացու գեղարվեստափիլիսոփայական համակարգում բարձրյալ Աստված անսկիզբ անվախճանի, «անընդգրկելի հեռավորի» եւ միեւնույն ժամանակ՝ «անընդմիջելի մերձավորի» կարգավիճակով է մարդուն հարազատ ու սրտամոտ, որովհետեւ սատանայի գայթակղիչ որոգայթներից խուսափելու եւ աստվածային կատարելության ձգտող տառապալ մարդուն մաքրագործվելու, երկրային մեղքերից ազատագրվելով՝ աստվածանալու հույսով էր սփոփում եւ մեղմում նրա մարդկային ողբերգությունը: *Շարունակությունը՝ էջ 5*

**ԵՆ** արդ, որովհետեւ մենք եւս ենթակալ ենք դատաստանի, եւ Դատաւորն [արդեն] շեմին է, իսկ մենք ներսում ընկղմուել ենք բիրապատիկ մեղքերի մեջ, վանենք ծուլութիւնը եւ մեծամեծ մեղքերը: Սանձենք [մեր] լեզուները, դուռ դնենք [մեր] բերաններին, դաստիարակենք [մեր] աչքերն ու ականջները, սրբենք մեր ձեռքերն ու [մարմնի] բոլոր մասերը, մտքի եւ սրտի բոլոր շարժումները, ընծայուենք Աստծուն, պահպանութիւն դնենք մտքի եւ սրտի դռներին, որոնցով մահն է մուտք գործում: Վերստին ստանանք անձերը մեր եւ նորոգուելով [մաքրուենք ինչպէս] մեր մանկութեան [տարիներին]՝ գարգարուելով նորափետուր արծուի պէս: Մերկանանք հին մարդու կերպարանքից՝ հնութիւնից մեր մեղքերի, եւ նորոգուենք ըստ մեր Արարչի պատկերի: Խոստովանութեան եւ ապաշխարութեան միջոցով արփիափայլ գարդարուենք, դառնանք սպիտակ՝ որ-

## ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇՆՈՐՀԱԼԻ ՎՈՐԵՒՈՐ ԽՐԱՏ

պէս ձիւնը եւ մաքուր՝ ինչպէս գեղմը [բազմիցս լուացուած]: Եւ ամենայն ժամ մեզ ուղղենք դէպի ճանապարհը երկնազնաց, որովհետեւ անյայտ է օրը եւ անգիտելի ժամը, որ իբրեւ որոգայթ ամենքին վրայ է հասնում (*Խմտ. Դուկ. ԻԱ. 35*) եւ գիշերային գողի պէս ներս է խուժում եւ սպանում՝ ըստ տերունական առակի: Մեծ է վախն անսպասելիորեն կենդանի Աստծու ձեռքում յայտնուելու, որովհետեւ ո՛չ օգնական եւ ո՛չ պաշտպան, ո՛չ բարեխօս եւ ո՛չ ուղեկից ենք ունենալու այն ահագոյն եւ անձանօթ ճանապարհին: Եւ եթէ այնպէս է, ինչպէս ասացի, ապա, եղբայրներ, զգուշութեամբ ընթանանք մեր կեանքի [արահետով], որպէսզի յանկարծ չընկնենք որոգայթը մահուան: Այլ արթուն հետեւենք մեր


կեանքի [ընթացքին], որպէսզի չնկնենք այն ընով, որ մահ է բերում տիրական մարդուն: Պաշար ամբարենք այն ճանապարհի համար, պարտ ու պատշաճ [կարելոր ամեն բան] վերցնենք հետներս, չջողկենք այստեղ, որովհետեւ երկար է ճանապարհը, եւ այնպէս չլինի, որ անհրաժեշտութեան դեպքում փնտրելով չգտնենք եւ այնժամ կորչենք անհետ: Մօտներս ժողովենք իւրը ողորմութեան, այստեղ պայծառացնենք մեր լապտերները, որպէսզի Փեսայի գալստեան պահին առագաստից դուրս չմնանք շիջեալ լապտերներով:

Դատաւորը դրսում է եւ մեզ դատաստանի է կանչում. այժմ տեսնենք, թէ ինչ պատասխան ենք տալու: Ձենենք ինքներս մեզ, թէ որքան ենք պարտք Նրան եւ արդեօք կարող ենք հատուցել պարտքը: Ինքներս մեզ դատենք եւ չսպասենք անաչառ Դատաւորին եւ անկաշառ ատեանի [օրուան]: Ճանապարհով ընթանալիս հաշիւ տանք, ամեն բան ի նկատ առնենք, ամեն բան յիշենք ու] բացայայտենք՝ մեր մտքերը, խօսքերն ու գործերը, անգամ ամենաչնչին գաղափարները կամ լսած բամբասանքները, նոյնիսկ դատարկաբանութիւնները: Գուցէ մեզ մատնի դահճի ձեռքը, իսկ դահիճը նետի խաւարչտին բանտը, որտեղից գուցէ չկարողանանք դուրս գալ, մինչեւ մեզանից չստանան վերջին նա-

քարակիտը (*մանրադրամը*), որովհետեւ ամեն բանի համար [պատասխան] է պահանջելու Դատաւորը՝ ոչ միայն գործերի, այլեւ խօսքերի եւ մտքերի, սրտի զգացածի եւ ցանկութիւնների: Եւ եթէ այսպիսի ճշգրիտ պատասխան պիտի տանք, մտածենք նաեւ, թէ Ո՛ւմ առջեւ ենք հաշուետու լինելու. ո՛չ թէ ինչ-որ մարդու, այլ Նրա, որ չի նայում [մարդու] դէմքին, այլ [քննում է] սիրտը, տեսնում է աներեւոյթը, ընկալում անյայտը: Նրա, որ ո՛չ կամակորութիւնն է ընդունում, ո՛չ [անհիմն կամ] իրաւացի պատճառաբանութիւնները: Նրա, որ դատելիս երբեք վկաների կարիք չի զգում, որովհետեւ մեր գործած ցանկացած բան յայտնի է Իրեն, եւ Իր մատենում ամեն ինչ գրուած կայ՝ թէ՛ գործ, թէ՛ խօսք, թէ՛ միտք: Նրան, որ ո՛չ կաշառք է պահանջում, ո՛չ ուշադրութիւն դարձնում դատելիս, այլ արդարութեամբ է քննում ամենքին՝ եւ մեծամեծներին, եւ հասարակ մարդկանց: Ո՛չ թագաւորից է երկիւղում, ո՛չ բռնաւորից երկնում, ո՛չ մանկանն է ողորմում, ո՛չ ալեւորին գթում: Մէկն ու միակն է Նրա նպատակը՝ արդարութեամբ դատել եւ ամենքին հատուցել ըստ գործերի: Եւ եթէ մեզ սպասում է այսպիսի ահարկու ատեան, ուր Դատաւորն անսահման արդար է, անխաբ եւ անկաշառ, ուստի գարիւրենք Նրա դատաստանից,

զգուշանանք պատասխանատուութիւնից եւ, քանի դեռ ժամանակ ունենք, բարին գործենք, քանի դեռ կան մեր օրերը, լոյսի որդիները լինենք, զաւակներն առաւօտուայ, որովհետեւ գալու է գիշերը, երբ ոչ ոք չի կարողանալու գործել, քանի որ հիմա է գործերի ժամանակը, երբ դեռ յոյս կայ վաճառաշահութեան՝ [վաճառքից օգուտ քաղելու]: Եւ քանի դեռ հնարաւոր է ձեռք բերել պատուական Մարգարիտը, չնայելէք ոչինչ. ո՛չ ունեցուածքն ու ստացուածքը, ո՛չ սիրելիներին ու բարեկամներին, ո՛չ հայրենի ժառանգութիւնը, ո՛չ մեր մարմինը եւ ո՛չ հոգին, եթէ կարիք լինի անգամ այն գոհաբերելու: Ամենը տանք, ոչինչ չխնայենք, ցանկացած՝ հնար ի գործ դնենք, որպէսզի կարողանանք ստանալ Մարգարիտն այն: Եւ քանի դեռ այստեղ ենք, լսենք խորհուրդները Պօղոսի, լսենք խորհուրդները Պետրոսի, [նաեւ] խորհուրդները Պօղոսի եւ Պետրոսի Տիրոջ, որ երբեմն սպառնում է, երբեմն՝ խնդրում, երբեմն կանչում է Իր մօտ, երբեմն՝ հեռու ուղարկում, երբեմն երանի է տալիս աղքատներին, երբեմն՝ ողբում մեծատուններին: Եւ քանի դեռ այստեղ ենք, անհնազանդ չլինենք պատուիրանին, կրկին անգամ օձին խորհրդական չլարձնենք, չտեսնանք աստուածութեան պատուի մեծութեանը, որն անհաս է, չընթանանք պատուիրանազանցութեան ծառի կողմը, չուտենք մահաբեր պտուղը, առաջին մարդու պէս չզրկուենք փառքերից եւ չուտանք թզենիով ծածկել խայտառակութիւնը մեր երեսների:

*Շարունակությունը՝ էջ 7*



Սկզբը՝ թիվ 21

16-17-րդ դարերի պանդխտության երգերը հայրենիքը կորցրած մարդու հույզեր են, կարոտի ցավոտ զգացումներով շաղախված խոհեր, որոնք հնչում են որպես հայրենասիրական երգեր: Սրանք տարբերվում են նախորդ դարերի պանդխտության երգերից, որոնց մեջ բնորոշը տնտեսական անմխիթար վիճակի պատկերումն էր: Արտագաղթը եւ հայրենագրության համընդհանուր տառապանքը հիշյալ դարերում առավել շեշտում էին կորցրած բնաշխարհի ու հայրենի տան կարոտը, քան պանդխտի նյութական խնդրով կյանքը: Ժամանակների փոփոխությունը հավանաբար սրել էր ազգային ինքնագիտակցությունն ու պատկանելիության զգացումը:

Բանաստեղծներից շատերի գործերում այս երգերը դարձան անհատական հույզերի ու ապրումների արտահայտություններ՝ անձնական տառապանքը ներկայացնելով իր ողջ պարզությամբ ու անմիջականությամբ:

Հայ գաղթաբաններում ստեղծագործած տաղերգուներից առանձնակի ուշադրության են արժանի Ստեփանոս Թոխաթեցին, Մեծպարոնը, Մարտիրոս Խարասարցին, Վարդան Կաֆացին, Խաչատուր Կաֆացին (Խաչգուզը) եւ Ուրիշներ, որոնք ոչ միայն սերտ կապեր են ունեցել «կտրիճվորաց եղբայրությունների» հետ, այլև տաղեր են գրել կտրիճների պատվերներով:

Ստեփանոս Թոխաթեցին 1602 թ.՝ ջալալիների արշավանքի ժամանակ, ենթարկվել է հալածանքների եւ ընտանիքի հետ պանդխտել է Կ. Պոլիս, հետո բնակություն է հաստատել Դրիմի Կաֆա քաղաքում, ուր եւ ծավալել է գրական լայն գործունեությունը (տե՛ս Պ. Խաչատրյան, *Հայ միջնադարյան պատմական ողբեր, եր., 1969, էջ 147-150*): Նրա ստեղծագործության չափազանց մասը ծավալով ոչ մեծ, բայց ժանրային առումով շատ այլազան է. ներքույն ու գովասանք, ողբ, գանձ, եղերեր եւ այլն:

Մենք կանդրադառնանք այն գործերին, որոնք առնչվում են վաճառականների ու

# ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



արհեստավորների (կտրիճների) կյանքին ու գործերին, նրանց ապրած ժամանակին: Ժամանակի պատմաբանական հարաբերությունների, ինչպես նաեւ Ստեփանոս Թոխաթեցու աշխարհայացքի մի քանի գծերի բացահայտման տեսակետից ուշագրավ ստեղծագործություն է «Ոտանավոր բանքս ասացեալ ի ըՍտեփանոս Թոխաթեցի իրիցուէ ի վերայ վաղամեռիկ էխպոր եւ հարազատ իւրոյ տեր Յակոբ սրբաքննունդ քարտուղար եւ բանիբուն քահանայի տարածամ վախճանելոց ի տիս մանկութեան» սգո երգը (*Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, էջ 347*):

Այստեղ հետաքրքիրն այն է, թե Թոխաթեցին ինչի համար է գովաբանում եղբորը, ինչն է ամենից շատ գնահատում է նրա մեջ: Հանձին Հակոբի՝ նա առաջին հերթին գնահատում է հայ դպրության անխնայ մշակին: Նա շեշտում է, որ Հակոբը եղել է հմուտ քերական, մեկնող, ճարտասան, Աստվածաշնչի քաջ գիտակ, մեծ ձիրքով օժտված գրիչ, որը նա «ժողովրդ գմանկունսն ի մի», նրանց սաղմոսներ ու Սուրբ Գիրք է ուսուցանել:

Ապա բանաստեղծը շեշտում է եղբոր եկեղեցավորությունը, այն, որ նա՝ որպես «բարի հովիվ», սատար է եղել պանդխտներին, այրիներին, որբերին, եղել է խոնարհ ու «հեզ», միաժամանակ «ժիր» ու «արի»:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ստեփանոս Թոխաթեցու երկու բանաստեղծությունները՝ գրված վաճառականներ Կարապետի եւ Ախիճանի մահվան առթիվ (*տե՛ս Նույն տեղում, էջ 519-528*): Սրանք եւս, ըստ հեղինակի, «սիրելի են ամեն մարդկանց», «աստվածասեր» են, մարդասեր, ծնողասեր, գրասեր եւ այլն:

Առեստրական գործարքների ժամանակ գոհվում են այս երկու կտրիճները՝ մեծ ցավ պատճառելով հարազատներին, ընկերներին, ճանաչողներին:

Բանաստեղծը մեծ ցավով ու ափսոսանքով է հիշում վաճառական Կարապետի մահը.

*Ո՛վ Կարապետ, դու գրկարդաց,  
Անուանի մեջ կործնորաց,  
Արդ կապեցաւ ճարտար լեզուդ,  
Գրքերդ ամեն անտեր մնաց:  
Ո՛վ Կարապետ, անունդ օրինած,  
Դու սիրեցար ամեն ազգաց,  
Երբ փոխեցար ի յաշխարհես,  
Երկիրս ամեն անտեր մնաց:  
Նույն տեղում, էջ 520*

Եղբրական եր նաեւ «իմաստուն վաճառական» Ախիճանի մահը: Նա, որ սիրելի էր հայրապետների, վարդապետների, ծերերի, կանանց, փոքրերի, առհասարակ բոլորի համար, գոհվում է ծովափենների հարձակումների ժամանակ:

Բանաստեղծության մեջ երեւում է կտրիճը՝ իր ողջ առաքնություններով.

*Անձամբ քաջ եւ արի էր,  
Հայոց ազգիս նա պարծանք էր,  
Խիստ գեղեցիկ հասակ ուներ,  
Ճարտարաքայլ եւ ուժեղ էր:  
Նույն տեղում, էջ 526*

Շարունակությունը՝ էջ 7

Սկզբը՝ էջ 2

Համանման իրողություն կարող է դրսևորվել նաեւ հույժման համակարգում: Օրինակ՝ տարբեր լեզուներում, որոնց բնորոշ է գոյականի հույժման համակարգը, կան նաեւ չհույժվող գոյականներ:

Այժմ անդրադառնանք բայաստեղծի կարգի դրսևորման առանձնահատկությանը: Եթե ըստ առանձնացվող երեք սեռի (ներգործական, կրավորական, չեզոք) դասակարգենք ժամանակակից հայերենի բայերը, ապա պարզ կդառնա, որ բայերի մի մասն ունի սեռային եռակի հակադրություն՝ ներգործական-կրավորական-չեզոք, մյուս մասն ունի երկակի հակադրություն՝ ներգործական-կրավորական, իսկ բայերի մյուս մասին այդպիսի հակադրություն բնորոշ չէ: Օրինակ՝ *մոտենալ-մոտեցնել-մոտեցվել* բայածեղերն իրար հակադրվում են *չեզոք-ներգործական-կրավորական* հարաբերությամբ: *Բերել-բերվել* բայերը հակադրվում են *ներգործական-կրավորական* հարաբերությամբ, իսկ, ասենք, *ծագել* բայը չի հակադրվում իր ներգործական կամ կրավորական ձևերին (այդպիսիք չկան): Սակայն այդ բայը համարվում է չեզոք սեռի գուտ այն պատճառով, որ արտահայտում է այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում կրող առարկա, կամ այնպիսի գործողություն, որը քերականական ենթակային չի անցնում այլ առարկայից: Այլ կերպ ասած՝ այս բայը համարվում է չեզոք, քանի որ չի ստանում ուղիղ կամ ներգործական խնդիր լրացում, ինչպես որ այդ լրացումները չեն ստանում սեռային հակադրություն ունեցող բայերի չեզոք ձևերը: Բայց արդյո՞ք առանց հակադրության կարող է արտահայտվել քերականական կարգ: Ինչպես վերը նշեցինք, քերականական կարգը դրսևորվում է քերականական

# ԲԱՅԱՍՏԵՂԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ



հակադրության միջոցով, իսկ այս դեպքում հակադրություն չկա, այլ կա նմանություն քերականական կարգով հակադրվող եզրերից մեկին, ինչպես որ թվի կարգ չունեցող գոյականների մի մասը նման է թվի կարգ ունեցող գոյականներին (ուստի կոչվում են անհոգակալ), իսկ մյուս մասն էլ նման է թվի կարգ ունեցող գոյականների հոգակալի ձևերին (ուստի կոչվում է անեզակալ), կամ չհույժվող բառերը նման են հույժվող բառերի ուղղական հույժման հետեւանքով): Այսինքն՝ վերը նշված եւ նրանց տիպի բայերը բայաստեղծ իրենց հակադրվող ձևեր չունեն, եւ առաջին հայացքից թվում է, թե դրանք պետք է սեռազուրկ համարել: Բայց արդյո՞ք ճիշտ է նման մոտեցումը:

Հարցը լուծելու համար կա երկու ճանապարհ: Կա՛մ պետք է ընդունել, որ բայերի մի մասին բնորոշ չէ բայաստեղծ քերականական կարգը, քանի որ քերականական կարգը դրսևորվում է քերականա-

կան հակադրության մեջ, իսկ այդ բայերի դեպքում չկան հակադրվող ձևեր, կա՛մ բայաստեղծ պետք է բնորոշել մի քիչ այլ կերպ՝ ընդգրկելով ամբողջ խոսքի մասին բնորոշ քերականական իրողությունը: Անշուշտ ճիշտ է երկրորդ տարբերակը, քանի որ քերականական կարգերը բնորոշելիս պետք է հաշվի առնել հետեւյալը: Քերականական կարգի հակադրությունը կարող է դրսևորվել ոչ միայն միեւնույն բառային բառածեղերի միջեւ, այլև միեւնույն խոսքի մասի մեջ մտնող բառական տարբեր միավորների միջեւ: Օրինակ՝ ռուսերենում գոյականների սեռային հակադրությունը (արական, իգական եւ չեզոք) դրսևորվում է գոյականների՝ միմյանց նկատմամբ ունեցած հակադրության միջոցով, այլ ոչ թե բառական մեկ միավորի բառածեղերի հակադրությամբ: Այսինքն, եթե ասվում է, որ *ժող* (սեռական) բառը արական սեռի է, ապա դա ասվում է ոչ թե այն հիմնվածով, որ նրան հակադրվում են այդ բառի իգական եւ չեզոք բառածեղերը,

այլ այն բանի հիման վրա, որ նրան հակադրվում են իգական եւ չեզոք սեռի գոյականները (այլ բառեր), որոնց սեռային հատկանիշները (այս կամ այն հնչյունով ավարտվելը) բնորոշ չէ թե՛ *ժող*, թե՛ արական սեռի մյուս բառերին: Այսինքն՝ սեռի կարգը արտահայտվում է ներխոսքմասային բաժանումով, այլ ոչ թե մեկ բառի քերականական բառածեղերի հակադրությամբ: Հետեւաբար միակամային ճիշտ է այն մոտեցումը, որ քերականական կարգը բնորոշելու համար նկատի պետք է առնել թե՛ իրար հակադրվող բառածեղերը, թե՛ իրար հակադրվող ներխոսքմասային բառախմբերը: Ի դեպ, խոսքի մասերն էլ ձևաբանական կարգեր են (*տե՛ս Հ. Պետրոսյան, Հայաստանի հրատ., եր., 1987, էջ 621-622*), որոնք ձևավորվում են որոշակի հատկանիշներով օժտված եւ դրանցով իրար հակադրվող բառախմբերով:

Հետեւաբար ներգործական, կրավորական եւ չեզոք բայերն առանձնացնելիս պետք է առաջնորդվել այն հակադրությամբ, որն ամկա է այդ բառախմբերի, այլ ոչ թե կոնկրետ բառերի ձևերի միջեւ՝ նկատի ունենալով, սակայն, որ բայերի մի մասի դեպքում կա նա բառածեղային հակադրություն:

Եթե սեռային բաժանում կատարելու համար ընդունենք միայն բառածեղային հակադրությունը, ապա նախ բայերի մի մասը պետք է անվանենք սեռազուրկ (նրանք, որոնք չունեն բառածեղային հակադրություն), այնուհետեւ պետք է որոշենք նաեւ բառածեղային հակադրություն ունեցող բայերի ելակետային ձևը: Վերջինս, այսինքն՝ ածանցման միջոցով դրսևորվող բայաստեղծային հակադրությունը

լիովին չպարզաբանված խնդիր է: Եթե *մոտենալ-մոտեցնել-մոտեցվել* ձևերը նույն բայի սեռային տարբեր դրսևորումներն են, ապա դրանք պետք է բառածեղեր համարել, քանի որ իրարից տարբերվում են քերականական կարգով: Սակայն չեզոք եւ ներգործական (պատճառական) ձևերը բառարաններում հաճախ բերվում են որպես բառական ինքնուրույն միավորներ: Բայց եթե դրանք բառածեղեր են, ապա պետք է բերվեր միայն ելակետային ձևը: Այստեղ էլ հարց է ծագում, թե որն է ելակետայինը: Հեզոք սեռի բայածեղը ելակետային համարելու դեպքում (*մոտենալ*) կխախտվի ընդհանուր սկզբունքը, քանի որ չեզոք ձևը չունեցող բայերի դեպքում էլ (*բերել-բերվել*) ելակետային պետք է համարել ներգործականը (*բերել*), քանի որ կրավորականն ածանցված է (չեզոք սեռի *մոտենալ* բայածեղն էլ ստանցանց ունի, բայց ածանցված չէ այլ սեռի բայածեղից): Ստացվում է, որ կրավորական սեռի բայերը միշտ ածանցված են, ուստի չեն կարող ելակետային համարվել, եւ *չեզոք-ներգործական-կրավորական* հակադրություն ունեցող բայերի համար ելակետայինը ներգործականն է: Մեր կարծիքով՝ ելակետային պետք է համարել սեռային տեսակետից չաճանցված ձևը՝ անկախ նրանից, թե որ սեռի ձևն է դա: Այսինքն՝ պատճառական կամ կրավորական ածանց ունեցող բայերը ելակետային չպետք է համարել, այլ պետք է համարել բառածեղ:

Արտաշես ՍԱՐԳՍՅԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու,  
դոցենտ

# ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՆԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Հայոց եղեռնը պատկերող գրականության համապատկերում իր ուրույն տեղն ունի Հ. Օշականի «Կայսերական յաղթագուրդը» ժողովածուն («Կայսերական յաղթագուրդը» ժողովածուում տեղ գտած երկերը տպագրվել են 1920-1939 թթ. Պոլսում («Ճակատամարտ», «Ազատամարտ», «Մարմարա»), Կահիրեում («Արև», «Յուսաբեր») և Երուսաղեմում («Սիոն») լույս տեսնող հանդեսների տարբեր համարներում: 1922 թ. Պոլսում լույս տեսած «Խորհուրդներու մեհեանը» գրքի վերջին՝ 128-րդ էջում Օշականը գրում է, թե «Կայսերական յաղթագուրդը» մեկ այլ հատորում շուտով լույս կտեսնի: Իսկ թե ինչ պատճառներով այդ հատորը լույս չի տեսել, պարզ չէ: Պարզ չէ նաև այն, թե գրքում զետեղված վեց պատմվածքից զատ՝ Օշականն ուրիշ ինչ պատմվածքներ է ծրագրել ներառել: Հետագայում՝ 1983 թ., գրողի ծննդյան 100-ամյակի առիթով այդ գործերը մեկտեղվել են Բեյրութում լույս տեսած համանուն ժողովածուում):

Եղեռնին և դրա սարսափելի հետեւանքներին ակնարկային անդրադարձ կա նաև «Խորհուրդներու մեհեանը» (1922) ժողովածուի տարբեր պատմվածքներում, որոնց մեջ հատկապես առանձնանում է «Կառավար գիշերով» պատմվածքը, որն իր ասելիքի սահմաններով բավականին ընդգրկում է: Այս ժողովածուներում որոշակիանում է ոչ միայն Օշական գրողի, այլև քաղաքագետի դիմագիծը:

«Կայսերական յաղթագուրդը» ժողովածուն բացվում է համանուն շարքով: Շարքն ունի առաջաբան, որտեղ ժողովրդի քաղաքական հարցերին անդրադարձող գրողը գնահատում է պատմական երեւույթները, 20-րդ դարասկզբի աշխարհաքաղաքական այն իրավիճակը, որի զոհը դարձավ հայ ժողովրդի մի զգալի հատվածը:


Օշականն այն համոզմունքն է հայտնում, որ շնորհից հաղթանակներն ու փառքը մեծ տերությունները ձեռք են բերել այլ ազգերի արյան և կորուստների գնով: Իսկ Հայոց եղեռնի հարցերին անդրադառնալիս հեղինակն իր քննադատությունը և նախատիքը ուղղում է գերմանացի կայսր Վիլհելմ 2-րդին (նա մեծ դեր է խաղացել Հայկական հարցում՝ իր հակահայ քաղաքականությամբ սատարելով սուլթան Աբդուլ Համիդին), ում կայսերական ծիրանին վարագուրեց «մեկը այն անսխալ կառուցվածք էր, որոնցմով աղտոտած ըլլայ երբեք մարդերուն պատմությունը» (Յակոբ Օշական, Կայսերական յաղթագուրդը, Պեյրուֆ, 1983, էջ 9: Այս հրատարակությունից քաղված մյուս մեջբերումների միայն էջերը կնշվեն): Ահա թե ինչու շարքի առաջաբանը կայսերն ուղղված բողոք-նամակ կարող ենք համարել: Բայց, խորամուխ լինելով առաջաբանում արծարծված խնդիրների մեջ, կարող ենք եզրակացնել, որ Օշականի քննադատությունն ավելի շատ ուղղված է մեծ տերությունների անտարբերության դեմ, որոնց աչքի առջև ու թողություններ քաղաքակիրթ հորջորջված դարում ոչնչացվում էին ժողովուրդները:

Թուրքերի վայրագ գործողությունների զուգահեռները կարելի է տեսնել նաև այլ ժողովուրդների պատմության մեջ: Սակայն Օշականը նշում է, որ հայերի եղեռնը մարդկային պատմության այն էջերից է, «ինչ որ մարդերը չտեսան իրենց պատմության բոլոր գեղեցիկներուն ատենն անգամ» (էջ 9), և դրա «բացատրությունը» չկրցան հասնիլ շարժող ժողովուրդներու տարաբախտ արուեստագետները» (էջ 44): Ուրեմն Օշականը, որ իր պարտքն էր համարում այդ ամենը գրականություն փոխադրելու, որոնում էր արտահայտման ձեւեր՝ կարծես հաստատելով Վիտալի Յանկոյի այն տե-

սակետը, թե՛ «Այդ աղետը կարիք ունի մի նոր լեզվի, գուցե և առանց բառերի» ([http://imyerevan.com/hy/culture/view/10273/?fb\\_comment\\_id=872567289474339\\_873321802732221#f34b89\\_213e295c](http://imyerevan.com/hy/culture/view/10273/?fb_comment_id=872567289474339_873321802732221#f34b89_213e295c)):

Հեղինակը պատկերում է եղեռնը՝ ոչ մի անգամ ոճագործի ազգությունը չնշելով: Փոխարենն առկա են «գիշակեր», «արիևի ծարաւ գազան» և այլ մակդիրներ: Միակ բանը, որ պարզում է ոճագործների ազգությունը, նրանց դրոշի նկարագրությունն է. «Մեծ դրոշակ մը վետվետուն, իրենց ետին, կարմիր, աստղէ աչքով մը, որուն վրայ ճիւղողըն սպիտակ յօնք մը կը կորանայ» (էջ 72): Շատ հատվածներում չկա նաև «մեր ցեղը» արտահայտությունը, որը հուշեր հայերի կոտորածի մասին (միայն «Տանտան» պատմվածքում են նշվում «հայ» բառը և Պոլիս քաղաքի անունը): Բացակայում են նաև տեղանունները, փոխարենը՝ վերի գյուղ, վարի գյուղ, պոստիկ լեռ, դարավոր արջուր և այլն: Այսինքն՝ տեղանունների և ազգությունների գանազանող անունների բացակայությունը վկայություն է այն բանի, որ գրողի ցավը ծնվել է ոչ միայն իր ազգի տառապանքներից, այլև առհասարակ ոչնչացվող ժողովուրդների տառապանքից, համամարդկային ցավից, և նրա մտորումների կենտրոնը դարձել է մորթվող մարդը (ոչնչացվող ժողովուրդների խնդրին Օշականն անդրադարձել է նաև «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուում), իսկ թուրքը՝ միջանկյալ օղակ նրա և «քաղաքակիրթ» աշխարհի միջև:

«Կայսերական յաղթագուրդը» վերնագիրը ծաղրական-քննադատական ուղղվածություն ունի: Ի՞նչ հաղթագուրդ, ի՞նչ հաղթարշավի մասին է խոսքը, և ի՞նչ էր թողել այն իր ետևում: Օշականն արտաքին մեղավորների շարքում, հանձին Վիլհելմի, շեշտում է հզոր Գերմանիայի



դերը. «Կիսաստուածը այդ օրերուն աշխարհին ճակատագիրն ուներ իր մակա-նին տակ» (էջ 9): Բայց փառքն ու դափնի-ներն անցողիկ են, ինչպես անցողիկ է կյանքում ամեն բան: Նրանց ետևում մնում են պատմությունը և մի ամբողջ ազգի նախատիքն ու արգահատանքը:

Օշականն առաջ է քաշում մի նուրբ հարց եւս: Մեծ տերությունների պետական գործիչների զավթողական քաղաքականությունը նրա համար պարզ էր, բայց այն, թե մի ամբողջ ժողովրդի գողգողային ինչպիսի անտարբերությամբ է նայում զավթող երկրների հասարակ ժողովուրդը, գրողի համար մնում է անհասկանալի: Անհասկանալի է նաև այն, որ նման անտարբերություն դրսևորում է քրիստոնյա և քաղաքակիրթ համարվող ժողովուրդը: Ճիշտ է, Վիլհելմի կառավարումը նշանավորվում է Գերմանիայի հզորացմամբ, ժողովուրդը մեծարում և փառաբանում է նրան, բայց, ավարդ, մոռանում է մերժել և դատապարտել ոճագործությունը:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 3

Հովի. Թումանյանն ամենուր գգում էր «Աստծու շունչը կենդանի», որը, սակայն, դեռևս չէր առարկայացած ու մարդկայնացած, թեև հանճարեղ Լոռեցին գիտեր, որ հայությանն է վերապահված՝ Նարեկացու միջոցով «հառաչանքով սրտի խորքից Աստծու հետ խոսք խոսելու» և «չարաղետ տանջանքներում խորհուրդ խորին խորհելու» առաքելությունը: Իսկ ազգային ողբերգությունը հեղափոխությամբ մեղմելու, հեղափոխական բուռն ոգեւորությունից մինչև ծայրահեղ հուսահատության հասած, հիասթափված Եղիշե Չարենցը 1930-ական թթ. մղձավանջային մթնոլորտում, գլուխներ թոցնող միջնադարյան արյունոտ կացնի շողարձակման պայմաններում ապավինում էր մեծ աղոթասացին՝ գաղափարի և հավատի վկա Նարեկացուն՝ որպես Աստծուն կապող վերջին հույսի:

**Էլ ո՞ւմ դիմես, ո՞վ Տեր, արդ քեզանից բացի...**  
«Տերապատիքոս»

Իսկ շիրազյան քառյակներում տեսնում ենք նախորդներից և իր իսկ «Բիբլիական», «Աստծու գլուխգործոցը», «Թոնդրակեցիները» և «Ինքներգանք համամարդկային» պոեմներից եկող՝ Աստծու որոնման, Բարձրյալի ու Կատարյալի հետ հաղորդակցվելու նարեկացիական ձգտումների բանաստեղծական նոր ու հզոր արձագանքներ, որոնք միայն պարզ ազդեցությամբ կամ ընթրիխակությամբ չեն բացատրվի:

Հազարամյա հեռավորությունն ու զարգացման ընթացքը բնականաբար պիտի բերեին

## ՇԻՐԱՅՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՎՇԽԱՐԴԸ



Մարդ և Աստված հարաբերության և աստվածային մարդկայնացման նոր ընկալումներ ու երկրային դրսևորումներ՝ հռչակավոր «Բիբլիականի»

Ինձ չի կարող անդունդ օգել. ինձ հետ Աստված է խոսում  
274

**Որ ոչ թե Աստված ստեղծեց մարդուն, Այլ մարդն իր սիրտը ստեղծեց Աստծուն**  
և  
**Այնինչ նիրհում է Աստված իր հոգում**

բանաստեղծից սկսած՝ մինչև

Մորս բարի աչքերի մեջ մեծ հաչեցյալն է խոսում,  
ես Աստծու ոտնաձայնը սրտիս միջից եմ լսում,  
Ինչքան էլ ինձ ստվեր դառնա իմ դարի չար սատանան՝

կացին կասկածներ չունեն, և նրա «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը, որքան էլ մարդու՝ աստվածային կատարելության ձգտման կամ աշխարհային ու երկնային հարաբերակցության հզորագույն գեղարվեստական արտահայտություն, հենց մեծ հավատի ծնունդ էր: Իսկ «Մատյանում» պատկերված ողբերգության պատճառն անհաղթահարելի նորանոր մեղքերն էին, որոնց անդադար խոստովանությունը և մինչև իսկ Բարձրյալի շնորհած թողությունն անիրագործելի էին դարձնում մարդու աստված դառնալու հույսի իրագործումը: Իրոք բարդագույն մի խնդիր, որի հանճարեղ գեղարվեստականացումն է «Նարեկը»:

Իսկ աստվածայինի հանդեպ ի՞նչ դիրքորոշում ուներ Հովի. Շիրազը մանավանդ խորհրդային աթեիզմի դարաշրջանի գաղափարական պարտադրանքների պայմաններում:

Նարեկացու և Թումանյանի նման՝ Հովի. Շիրազը եւս միա-միտ ու պարզունակ հավատացյալ չէր, այլ Աստծու առեղծվածը պեղում և որպես նորագույն ժամանակների հայ բանաստեղծ էր ևս իմաստավորում իր հավատի առարկայի Եութությունը: Իրականում կատարյալ, անողոք «գոյության կռվի մեջ էլ» մինչև մահ մաքուր մնացած մարդն է Շիրազի պաշտամունքը, որը կարող է գերազանցել մինչև իսկ Աստծուն: Սակայն Հովի. Շիրազի ժա-

մանակներն ու հանգամանքները նախորդներից ավելի նպաստավոր չէին. հայության հանդեպ գործադրված մեծ ոճիր ու պատմական անարդարություն, հայրենիքի մեծ մասի բռնազավթում և կարմիր եղեռնով սփյուռված հայություն՝ ճերմակ եղեռնով ձուլման վտանգին ենթակա, նույնիսկ հայրենիքում հայոց լեզվի փրկության և հայ սերունդների ազգային ինքնության պահպանության նպատակադրմամբ, ինչպես ինքն է դիպուկ բնութագրել՝ «պիտի բախվեր սատանային»: Ժողովրդի քառաստեղծը, որ «մարդկային ոգիների առաջնորդ» էր, հանրության առջև բարձրագույն պատասխանատվություն էր կրում «գիտական կոմունիզմի» և աթեիզմի գերակայության պայմաններում: Հակառակ պետական քարոզամեթոդային պարտադրանքի՝ նա պիտի անցներ բոլոր կասկածների ու երկմտությունների կամրջով, պարզեր միստիկական բոլոր անլուծելի թնջուկներն ու առեղծվածները, հավատար իր բովանդակավորած Աստծուն և հավատացներ հայացքը իրեն հառած հայությանը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում:

Երբ հարցնում են՝ հավատո՞ւմ եմ, չեմ իմանում՝ ի՞նչ ասես,  
Հավատում էլ՝ բայց թե հարցնես ո՞ւր է մտում՝ ի՞նչ ասես,  
Աստծու միակ օթեանը արթուն խիղճն է մարդկային՝  
Այն էլ հազար տարին մեկ է քնից գարթնում, ի՞նչ ասես:  
276

Շարունակելի  
**Սամվել ՄՈՐԿՐԱՅԱՆ**  
**Բանասիրական գիտ. դոկտոր,**  
**պրոֆեսոր**

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆՊԻԱՐՅԱՆԻ ՄԵՂԵՂԻՆԵՐՆ ԱՎԵՏԻՔ ԻՍԱԿԱԿՅԱՆԻ ՀՈԳՈՒՄ ԿԱՄ՝

## «ՀԱՐԱՋԱՏ, ՍՐՏԱԳԻՆ ՁԱՅՆԵՐ»

(Ալ. Սպենդիարյանի ծննդյան 145-ամյակի առթիվ)



Գործ՝ Ա. ՍՍՐՅԱՆԻ

Հայ ազգային սիմֆոնիկ երաժշտության ծնունդն անվիճելիորեն մեծանուն կոմպոզիտոր, խմբավար ու մշակութային գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան հետ է կապված: Ծնված լինելով հայրենիքից հեռու՝ Ղրիմում (1871 թ.)՝ իր ստեղծագործական գործունեության հենց սկզբից նա մեծ հետաքրքրություն ցուցաբերեց արեւելյան մեղեդիների նկատմամբ՝ ջանալով իր համար բացահայտել հայկական երաժշտության ակունքները: Դրա վառ ապացույցն են ոչ միայն հիասքանչ «Ալմաստ» օպերան ու «Երեւանյան Ետյուդներ» սիմֆոնիկ շարքը, այլև վաղ շրջանի որոշ երկեր, այդ թվում՝ «Ղրիմյան Եսքիզներն» ու «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը: Լեռնոստվի համանուն բանաստեղծության թեմաներով գրված «Երեք արմավենի» (1-ին հրատ. 1907 թ. Լայպցիգ), որի համար 1908 թ. կոմպոզիտորն արժանացել է Գլինկայի անվան երաժշտական մրցանակի, դեռ վաղուց հայտնի ու սիրված էր ոչ միայն հայ եւ ռուս, այլև եվրոպացի երաժշտասերների շրջա-

նում: Ծակատագրի բերումով տարիներ շարունակ տարագրության մեջ եղած հայ մեծ բանաստեղծ, արձակագիր ու հասարակական գործիչ Ալեքսիե Իսահակյանը, որը 1910-20-ական թվականներին ապրում էր Եվրոպայում եւ առաջին անգամ այնտեղ էլ լսել էր Ալեքսիարյանի ստեղծագործությունները, հետագայում «Հարագատ, սրտագին ձայներ» վերնագրած իր հուշերում գրում է. «Մեծ կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանի անունը շատ վաղուց էլ լսել եմ՝ «Երեք արմավենի» ջրնաղ սիմֆոնիայի հետ միասին: Այդ սիմֆոնիան շատ հուզել էր ինձ: Դրանով էլ վերջացել էր իմ ծանոթությունը նրա երաժշտության հետ»:

«Երեք արմավենի» իրոք անզուգական մի ստեղծագործություն է, որտեղ արտահայտված է սիմֆոնիկ ոճի սպենդիարյանական յուրօրինակ ընկալումը: Այն միանգամից ճանաչում բերեց հեղինակին՝ հաստատելով նրա տեղը ժամանակի անվանի կոմպոզիտորների շարքում: Բանաստեղծ Իսահակյանն էլ, որ ճշմարիտ արվեստագետ եւ արվեստասեր էր ու մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ոչ միայն գրականության, այլև արվեստի մյուս ձեւերի նկատմամբ, չէր կարող չսիրել Սպենդիարյանի այդ հրաշալի ստեղծագործությունը: Այդ տարիներին նա շատ էր շրջագայում Եվրոպայում. եղել է Յուրաստանում, ճամփորդել Իտալիայում՝ ծանոթանալով այդ ժողովուրդների հնագույն մշակույթին: Այդ ճամփորդությունների ժամանակ էլ Վենետիկի «Բանդա մունիչիպալիտե»-ի (քաղաքային նվագախումբ) կատարմամբ առաջին անգամ լսելով Սպենդիարյանի «Ղրիմյան Եսքիզները»՝ շատ է տպավորվել ու հմայված հետագայում այսպես է գրել իր հուշերում. «Հանկարծ լսում եմ հարագատ, սրտագին ձայներ, հայրենիքից եկած: Սիրտս զարկում է

ուժգին, ինչ է սա, պատրանք է, երազ է, որտեղից է... Իսկույն կանչում եմ սպասավորին, խնդրում եմ, որ գնա, իմանա, թե ինչ են նվագում: Գալիս, հայտնում է՝ Սպենդիարյան-Եսքիզներ»: Ինքնին հասկանալի են օտարության մեջ ապրող գրողի հույզերն ու զգացմունքները հայրենի երկրի հարագատ մեղեդիները լսելիս: Գուցե նույնիսկ արժանի հպարտությամբ է լցվել այն գիտակցումից, որ իր տաղանդավոր հայրենակցի ստեղծագործությունները, իր հեռավոր, փոքրիկ հայրենիքի մեղեդիները թովել, կախարհել են նաեւ զարգացած



Գործ՝ Ա. ՍՍՐՅԱՆԻ

Եվրոպային: Հայրենիքի կարոտն ու հայրենական մեղեդիների հնչյուններն իրար են միահյուսվել բանաստեղծի հոգում, լուսեղեն երազի պես ոգեւորել, ոգեշնչել նրան՝ ծնունդ տալով գուցե պանդիստության ու հայրենասիրության թեմաներով նոր երգերի. Բախտը ձգել է ինձ օտար հեռուն, Հայրենի ափերն կորել են անդրած. Մակույկս եմ հանձնել օտար հովերուն,- եվ ննջել կուզեմ, ախ, շատ եմ հոգնած...: «Ղրիմյան Եսքիզների» թովչանքն իրոք զորավոր է: Այն փաստորեն առաջին սիմֆոնիկ երկն է, որտեղ որպես թեմատիկ կյուրե՝ օգտագործված են ժողովրդական մեղեդիներ («Սիրո երգը», «Հարսի լացը», խնջույքի երգեր, պարեր-

գեր եւ այլն): Դրանց շնորհիվ շատ ռեալիստորեն են արտապատկերվում ժողովրդի կյանքն ու կենցաղը՝ ունկնդրի առջեւ բացելով երազային Արեւելքի հմայքը, տանելով նրան մի անծանոթ, գունագեղ աշխարհ: Սպենդիարյանն ինքն էլ այդպիսին էր՝ ասես մի այլ աշխարհից եկած, մի տեսակ ցրված ու անտարբեր իրեն շրջապատող իրական աշխարհի նկատմամբ: Հենց այդպիսին էլ նկարագրում է նրան Իսահակյանն իր հուշերում, որտեղ, ի դեպ, բարձր է գնահատում ոչ միայն Սպենդիարյանի ստեղծագործությունները, այլև նրան՝ որպես մարդու ու քաղաքա-

բանաստեղծ Ալեքսիե Իսահակյանը, կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանը եւ Ալեքսանդր Սպենդիարյանը: Կոմպոզիտորներն իրենց նոր ստեղծագործություններն էին նվագում, ճարտարապետն իր նոր, հետաքրքիր նախագծերն էր ցույց տալիս, պատմում ապագայի երազային երեսանի մասին: Միահյուսվում էին ճարտարապետական կերտվածքների պատկերներն ու մեղեդիներն՝ հուզեցնելով ամենքին: Շատ պատկերավոր է նկարագրում Իսահակյանն այդ օրվա իր զգացումները. «Եթե գեղջուկի կամ հովվի պարզ խրճիթը իր չորս պատերով նման է ժողովրդի երգի քառյակին, չորս տողերին, ասենք «Ջան գյուլումին», ապա Թամանյանի մոնումենտալ շենքերը նման են Սպենդիարյանի նույնքան մոնումենտալ սիմֆոնիաներին, «Ալմաստին»... կամ առհասարակ երաժշտական մեծ կոթողներին: Մեկով մարմանում էր կամ թարգմանվում մյուսը, եւ մենք այդ երեկո պարեցինք մի երջանիկ ինքնամոռաց պահ - բարձր արվեստի իսկական մի վայելք»: Իսահակյանն իր հուշերում տեղեկացնում է նաեւ, որ ծանոթանալով իր քնարերգուհուն՝ Սպենդիարյանն առաջարկել է համատեղ «Հայաստան» վերնագրով մի տեթրալոգիա գրել: Այդ երկուսն ափսոսաբար արտահայտվել հայ ժողովրդի ողջ պատմությունը՝ հնագույն հեթանոսական շրջանից մինչեւ Հայոց պետականության անկումը, ժողովրդի տառապանքներն ու պայքարը: Ապա պիտի ներկայացվեն հաղթանակներն ու նվաճումները, նոր պետության ու պետականության վերակերտումը: Բայց Սպենդիարյանի վաղաժամ մահը խանգարեց ծրագրի իրագործմանը: «Վերջին հուշը, որ ունեմ մեր հավետ անմոռանալի Սպենդիարյանից՝ հետեւյալն է. նա ղեկավարեց 1928 թվի գարնանը «Ալմաստից» հատվածներ մեր Կուլտուրայի տանը: Վերջին անգամ...»: Ավար, կյանքից վաղ հեռացավ մեծանուն կոմպոզիտորը (1928-ին), եւ խորհում է բանաստեղծն ափսոսանքով, որ բազում ստեղծագործական ծրագրեր ու մտահղացումներ անկատար մնացին. «Սակայն այն, ինչ նա թողեց մեզ՝ անմահ է, անկորնչելի է իր հեռագրեցության մեջ ապագա սերունդների վրա - անզնահատելի»: Իրավացի է մեծանուն բանաստեղծը. հիրավի մեր ազգային սիմֆոնիկ երաժշտությունը զարգացավ Սպենդիարյանի բացած ճանապարհով, սերունդները գնահատեցին ու պահպանեցին նրա ստեղծագործական ավանդույթները:

Տիգրան ՍՍՐՅԱՆ  
Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդպահ

# ՏԱՐՈՆԻ ՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՎԵՐՁԻՆ ՆՈԳԵՎՈՐ ԿՌԱՋՆՈՐԴԸ...

Վաղնջական ժամանակներից Մշո դաշտը հանդիսացել է մեր պատմության փառահեղ դրվագների եւ հիասքանչ մշակույթի կերտման օրրաններից մեկը: Ահա թե ինչու անզուգական, զմրուխտյա այդ գեղանի դաշտում սփռված են հայոց հերոսական անցյալը վկայող հուշարձանները, հայոց մշակույթի, դպրության եւ ազգային ազատագրական պայքարի նվիրյալների՝ այսօր արդեն անհայտ դարձող շիրիմները: Մշո դաշտում են ամփոփված հանուն հայոց պետականության հզորացման մղված պայքարում ընկած փառահեղ Մամիկոնյանների, հայկական ազատամարտի ահեղ բոցերում ողջակիզված քաջ հայդուկների մարմինները:

Հայ ազգային-ազատագրական շարժման կարեւորագույն օջախներից մեկը Տարոն աշխարհի Ս. Կարապետ վանքն է: Այն հնուց ի վեր հայ մտքի եւ ոգու ինքնությունը խորհրդանշող կառույց է: Սկսած 5-րդ դարից՝ Ս. Կարապետ վանքը հոգեւոր եւ մշակութային կարեւոր դեր է կատարում հայ իրականության մեջ: Այնտեղ վաղ ժամանակներից ձեւավորվել է դպրության կենտրոն: Ինչպես վկայում է Կորյուն պատմիչը, այնտեղ՝ այդ դպրոցում է իր նախնական կրթությունն ստացել Մշո Հացեկաց գյուղում ծնված Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց այբուբենի արարիչը: Պատմական ավանդության համաձայն՝ 303 թվակա-

նին Ս. Կարապետ վանքը հիմնադրել է հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորիչը՝ հայոց հեթանոս աստվածներին՝ Անահիտին, Վահագնին, Աստղիկին պատկանող մեծքաների տեղում: Այս վանքը ժամանակի ընթացքում կոչվել է նաեւ այլ անուններով: Պատմական հիշատակություններում է ժողովրդի հիշողության մեջ այն հայտնի է որպես Առաքելավանք, Գլակա-իննակնյա, Գլակա Սուրբ Կարապետ, Իննակնյա վանք: Թուրքերը նրան կոչել են Չանգաբիլիսա, որը թարգմանաբար նշանակում է Չանգակավոր վանք: Հարյուրամյակներ շարունակ նոր կառույցներ են ավելացել այդ վանքին, եւ այն իրենից ներկայացրել է մի ամբողջ համալիր: Նրա նշանա-

վոր կառույցներից են եղել փայտաշեն Սբ Գրիգոր եւ 16-րդ դարում կառուցված Սբ Կարապետ եկեղեցիները, որոնք ավերվել են 1784 թ. երկրաշարժից, իսկ դրանից ավելի վաղ՝ 1750-ական թվականներին, այն ավերվել է, երբ Մուշը գրավել էին պարսիկները: Սակայն պատվախնդիր եւ հպարտ մշեցիները շուտով վերականգնում են այդ եկեղեցիները՝ շինարար եւ ճարտարապետ երկու այրերի՝ Կորիկ Սրգոյի եւ Բաղդեցի Ղազարի գլխավորությամբ: Համալիրի գլխավոր՝ Սբ Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում, որի վրա 18-րդ դարի վերջերին կառուցվել է տասնվեց մարմարյա սյուների վրա բարձրացող եւ քսանհինգ կամարից բաղկացած շքեղաշուք գանգակատունը: Վանքի համալիրը շրջափակված է եղել հաստ եւ ամրակուռ պարիսպներով, որոնք ունեցել են երկու դարպաս: Այնուամենայնիվ, վանքը շատ անգամ գրավել ու ավերել են տարբեր հրոսակներով: Շարունակությունը՝ էջ 8

# ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇՆՈՐՀԱԼԻ

## ՀՈԳԵՒՈՐ ԽՐԱՏ

Սկզբը՝ էջ 3

Եթե Բարերարը մեզ ապաշխարութեան կանչի, չյապաղենք, ոչ մի [առիթ չտանք եւ] հնարաւորութիւն չթողնենք մեզին, որ դատապարտուելով չարտաքսուենք դրախտից: Եւ ոչ թէ անիծուելով կուղարկուենք երկիր, այլ դէպի հուրը գեհեկի, ուր [անդադար] լացն է աչքերի եւ կրճտումն ատամների (հմմտ. Մատթ. ԺԳ. 42), ոչ թէ այս փշաբեր երկիրը, այլ այն, որ թունաւոր որդեր է ծնում, ոչ թէ [այնտեղ], ուր հրամայուեց երեսի քրտինքով հաց վաստակել, այլ անդունդը, ուր սովն է Յացի եւ ծարաւը Ջրի, այսինքն՝ Աստծու Խօսքի եւ Իր Մարդասիրութեան:

Ինքներս մեզ քննենք եւ ոչ թէ կողմակալ ու անօրէն [եղանակով], մեր գերանը չտեսնելով՝ այլոց փուշը նկատենք: Չծառայենք պազշտութեանը (անառակութեանը), այլ պարկեշտանանք ողջախոհութեամբ, ազատութեամբ կռապաշտ չդառնանք, այլ ողորմածութեամբ քաւենք մեր մեղքերը, վաւաշտ հայեացքով չպղծենք մեր աչքերը, այլ արտասուքով լցնելով՝ մաքրենք, այլասերուած երգերով չապականենք մեր ականջները, այլ աստուածային պատուիրանը լսելով՝ սրբենք, պղծակից շօշափմամբ գարշելի չդարձնենք մեր

ձեռքերը, այլ տնանկներին օգնութիւն տալով եւ աղօթքի համար վեր կարկառելով՝ մաքրագործենք: Զանի դեռ Տէրը նստած է շնորհների աթոռին, խոստովանութեամբ մօտենանք Նրա գահին եւ արժանանանք Նրա ողորմութեանը: Յիմա է շնորհները բաշխում, հիմա է մեղքերին թողութիւն տալիս, հիմա է կարեկից լինում տառապելներին եւ հիմա է վշտակցում վշտացեալներին, սգակցում սգացողներին: Յիմա է բժշկում վեղքերը, հիմա է չեզոքացնում հիւանդութիւնները, հիմա է վերացնում մեղքերի մահը, հիմա է քիչը պահանջում եւ մեծամեծը շնորհում, հիմա է խոստանում երկնային արքայութիւնն ու կեանքն անասելի եւ բիրապատիկ աւելին:

Չսպասենք դատական աթոռի [ժամանակներին] եւ սպասուող դատաստանին, որովհետեւ աթոռն այն եւ դատաստանն արդար են անսահման. երբ Տէրը էլնում է շնորհների աթոռից եւ բազմում փառաց գահաւորակին, արդարութեամբ է դատում եւ հատուցում ասեւ նժարի վրայ դնելով ամենքի գործերը՝ թէ՛ մեծամեծների, թէ՛ փոքրաւորների: Յիմա Աստուած օգնում է չարիքները զղջացողներին, այն ժամանակ ահագոյն կերպով արհամարհելու է մարդկանց: Յիմա ներողամիտ է

մեր բիրապատիկ սխալների նկատմամբ, իսկ այն ժամանակ անմիջապէս տեղալու է Իր բարկութիւնը անհնազանդութեան որդիների վրայ: Այժմ հօր պէս գթած է մեղքերով խոտորուածների հանդէպ եւ աւելի քան մայրը սգում է մեղքից ընկածներին: Այս է պատճառը, որ մերթ աղաչում է, մերթ՝ աղերսում, մերթ ուղարկում է պատգամաւորներ՝ առաքելներ, մարգարէներ, աւետարանիչներ, վարդապետներ, հովիւներ եւ անգամ Իր Որդուն ուղարկեց՝ ի հաշտութիւն մեղաւորներիս հետ: Իսկ այն ժամանակ Տէրն ու Դատաւորը պատասխան է պահանջելու համբերատարութեան եւ գթութեան համար, որն այստեղ արհամարհեցինք:

Եւ արդ, սիրելիներ, այս ամենը գիտենալով՝ չանտեսենք Աստծու ներողամտութիւնը եւ համբերատարութիւնը, որովհետեւ բարութեան է կոչում: Այնպէս չլինի, որ մեր չապաշխարելու եւ չզղջացող սրտի պատճառով գայրոյթի արժանանանք արդար դատաստանին Աստծու, որ իւրաքանչիւրին հատուցում է ըստ գործերի: Այլ [Տիրոջ] երկիւղով ընթանանք մեր կեանքում՝ երկնելով ոչ թէ սոսկ գեհեկի տանջանքներից, այլ Աստծուց հեռանալուց եւ Նրա տեսութեանը չարժանանալուց, ո-

րովհետեւ գեհեկի մէջ անվերջ արուելուց, անքուն եւ թունաւոր որդից աւելի վատ է Աստծու տեսութիւնից զրկուելը: Ոմանք սոսկ գեհեկից են երկնելու, միւսները՝ լոկ տանջանքներից, իսկ ես միայն զարհուրում եմ, սարսափում, դողում, արտասուում եւ անսահման ողբում, եթէ զրկուեմ Աստծու սիրուց եւ Նրա քաղցր պատկերը չտեսնեմ ու չլսեմ ձայնը երանաւետ: Ու եթէ, [Աստուած մի՛ արասցէ], այս հանդիպի ինձ, այլեւս ոչինչ են հրի այրելը, վիհն ընկնելը, որդի ուտելը, առյաւետ խաւարում մնալը, որովհետեւ ցանկացած դժնի տանջանքից եւ պատժից աւելի՛ անձիս համար դառնագոյնը վերելում ասուածն է:

Եւ ի՞նչ խօսեմ տանջանքների մասին. եթէ մուտք գործեմ արքայութիւնը եւ ժառանգեմ փառքերն ամենայն, բայց այնտեղ չարժանանամ Նրա տեսութեանը, գեհեկից աւելի չար կհամարեմ այդ հանգիստը: Իսկ եթէ գեհեկն ընկնի, եւ այնտեղ ինձ երեսար Նա եւ վայելի Նրա պատկերը, առ ոչինչ կհամարեի տանջանքը եւ այն ա-

ւելի մեծ պատիւ կհամարեի, քան թագաւորականը:

Եւ այժմ մեր ձեռքերում է Աստծուն տեսնելու կամ չտեսնելու [հնարաւորութիւնը], որովհետեւ եթէ այստեղ տեսնենք Նրան՝ աղքատների քաղցրութեամբ ինքնարկելով եւ քաղցեալներին կերակրելով, ծարաւներին արքուցանելով, մերկերին հանդերձաւորելով, օտարներին ընդունելով եւ հիւանդներին տեսութեան գնալով, բանտաւանդներին ազատելով, ապա նաեւ այնտեղ կկարողանանք տեսնել Նրան եւ լսել Նրա քաղցր ձայնը, թէ՛ «Իմ Զօր օրհնեալներ, եկէ՛ք, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը» (հմմտ. Մատթ. ԻԵ. 34), որին թո՛ղ դուք՝ ամենքդ արժանի լինե՛ք շնորհներով, մարդասիրութեամբ եւ ողորմութեամբ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Ջրիստոսի: Եւ Նրան, Նրա Զօրը եւ Զոգուն Սուրբ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց  
Գեորգ ՄԱՂՅԵԱՆԸ



Սկզբը՝ էջ 4

Պատմական առումով այս բանաստեղծութիւնների մէջ առավել հետաքրքիր են այն տեղեկութիւնները, որ Թոխաթցին տալիս է Կաֆայի վաճառականների գործունեության ու դրա հետ կապված վտանգների մասին: Ոտանավորներից տեղեկանում ենք, որ Կարապետն ու Ախիճանը եղել են «կտրիճվորաց եղբայրութիւնների» անդամներ: «Մօրուքն թուխ» այս կտրիճները գոհվում են օտար ափերում՝ «գեղբարքս ամեն ի լաց» թողնելով:

Այս իրադարձութիւնները Թոխաթցուն առիթ են տալիս մտորելու օտար երկրներում գտնվող հայերի անապահով վիճակի, նրանց քաղաքական ու տնտեսական կյանքի պայմանների մասին.

*Ազախ քաղաք շատ մարդ կերար  
Եւ ուտելով չի կշտացար,  
Չոմանք ծովու տակն տարար.  
Ի ոմանց հաւան արար գարար:*

*Չոմանք ուռուսն առեալ տարաւ,  
Ոմանք սրով սպանեցաւ,  
Ոմանց շատ մալ թալանեցաւ:  
Եւ շատ գերի ծառայ եղաւ:  
Նույն տեղում, էջ 520*



Այս երկու ոտանավորները լավագոյնս արտացոլում են հայ գաղթօջախներում ստեղծված «կտրիճվորաց եղբայրութիւնների» գործունեության, կտրիճների կյանքի պատկերները:

Խտրշա մանկան նահատակության պատմութիւնն ամփոփված է 16-րդ դարի բանաստեղծ Մեծպարոնի մի ոտանավորի մէջ՝ «Տաղ Խտրշայ մանկան, որ Մարգուսն քաղաքն է նահատակեալ» (տե՛ս նույն տեղում, էջ 265-275): Այս բանաս-

# ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՇ ՄԻՋՆԱԴՐԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

տեղծի մասին քիչ տեղեկութիւններ են հայտնի:

Յ. Սահակյանը ենթադրում է, որ Մեծպարոնը հանդես է եկել 16-րդ դարի առաջին կեսին, եղել է աշխարհական (տե՛ս նույն տեղում, էջ 690):

Կարծիքներ կան, որ Խտրշայի նահատակութիւնը տեղի է ունեցել 1541 թ., իսկ հեղինակն էլ այն ներկայացնում է որպէս ժամանակակից (տե՛ս նույն տեղում, էջ 690):

Մեծպարոնն իր տաղում նկարագրում է հայ ազգի վիճակն այն ողբերգական ժամանակներում, երբ «մենք թագաւոր չունիմք օճած, ոչ առաջնորդ ի վերայ խելաց», երբ տաճիկները ամեն կողմից խոցում էին ինչպէս «թիւնաւոր օճ դառնացած»: Այդ ժամանակ հայտնվում է բոլորի հույս ու ապավեն Խտրշա մանուկը.

*Այս Խտրշան, մանուկ գոված,  
Աղէկ կտրիճ անուն ելած,*

գոհվողն իր կյանքը պիտի գոհի նաեւ հայրենիքի համար, ինչպէս սուրբ Կարապետը՝ Վահագնի քաջութեամբ ու հզորութեամբ օժտված:

Կտրիճմանուկյան որոշ արձագանքներ ենք տեսնում 16-րդ դարի բանաստեղծ Միսաս Թոխաթցու գործերում:

Յայտնի է, որ Թոխաթցին իր կյանքի մեծ մասն անց է կացրել օտարության մէջ: Նա հայ գաղթականների հետ եղել է Կամենիցում եւ Սեչոյում, ապա հաստատվել Լվովում, ուր եւ ապրել ու ստեղծագործել է մինչեւ կյանքի վերջը (տե՛ս նույն տեղում, էջ 705): Յավանաբար բանաստեղծը սերտ կապեր է ունեցել «կտրիճվորաց եղբայրութիւնների» հետ, քանի որ նրա ոտանավորներում խոսք կա ընթերցող-եղբայրների, կտրիճների մասին:

«Տաղ վասն ննչեցելոց...»-ում Թոխաթցին իր շուրջն է հավաքում «եղբայրներին» եւ իր դժգոհութիւնն ու տրտմութիւնն արտահայտում վաղանցիկ կյանքի վերաբերյալ.

*Եղբայրք, ժողովեցէք, ի բոլորս եկէք,  
Ես գնալու եղա, ինձ պաշար դրէք,  
Չծեր շատ աղուհացն ինձ հալալ արէք.  
Եղո՛ւկ, եղո՛ւկ եւ ինձ հազար վա՛ր, անձն իմ:  
Նույն տեղում, էջ 463*

Բանաստեղծը կարողով է հիշում իր կյանքի պայծառ օրերը, սակայն անակնկալ հիվանդութիւնը ստիպում է նրան խորհել ամենագոր, անգամ «տղա կտրիճներուն» հաղթող մահվան մասին.

*Աշխարհս անցաւոր է, մարդու չի մնայ,  
Երանի ով գոհոյն օգուտն իմանայ,  
Տղա կտրիճներուն այլ մահ կու կենայ.  
Գիտէի, թէ աշխարհս էր ինձ մնալու:  
Նույն տեղում, էջ 463*

Թոխաթցին փիլիսոփա բանաստեղծ է. նրա բանաստեղծութեան մէջ գերիշխում է խոհը՝ կյանքի ու մահվան մասին: Չարմաւարի մի գոլգոթիայութեամբ շեքսպիրյան հանճարեղ ձեւակերպումը՝ «աղոթքներից մէջ կիիշես իմ մեղքերը», տեսնում ենք

Թոխաթցու ինչպէս հիշյալ բանաստեղծութեան մէջ («Մի՛ մոռանայք, յաղօթս ձեր յիշեցէք»), այնպէս էլ «Տաղ ի Թոխաթցի Միսաս դպրե ասացեալ»-ում.

*... Սրտիկս խոց է ամէն օր.  
Ինձ քո աղոթքում մի մոռնար:  
Նույն տեղում, էջ 455*

Միսաս Թոխաթցու նման տարագրութեան մէջ է անցել նաեւ 16-րդ դարի մեկ այլ տաղասաց Վրթանես Սոնկեցու կյանքը: Նա, գաղթելով Արարատյան գավառի Գիլան գյուղից, ապրում է Սեչոյի քաղաքում, ապա տեղափոխվում է Կաֆա, ուր դառնում է Կաֆայի հայոց եպիսկոպոսը (նույն տեղում, էջ 688):

Սոնկեցին մի քանի ոտանավոր-նամակներ է հղել դեռեւս մանկութեան օրերից իրեն «դասակից» Գրիգոր Վարապետուն: Այդ ոտանավորներից երեւում է, որ երկունս էլ եղել են «եղբայրության» անդամներ, նրանք շատ մտերիմ «եղբայրներ» են եղել, բայց չար մարդկանց պատճառով խռովել իրարից (նույն տեղում, էջ 227): «Նորին Գրթանիսի այս սուտ կենցաղոյս վերայ» ոտանավորում Սոնկեցին մեծ սիրով ու շերտութեամբ է խոսում Գրիգորի մասին: Նա ուրախ է, որ երկար խռովութիւնից հետո իրենք հաշտվել են.

*Ճար չունիմ, եղբայր բարի,  
Քան զհաշտիլն այլ իրք չի պիտի,  
Իմ սիրտս ի քո շատ սիրուն,  
Քան զմով փութով կու հալի:  
Նույն տեղում, էջ 232*

Բանաստեղծը դիմում է «եղբայրներին»՝ ասելով, որ իրենց խռովութեամբ ու փոխատելութեամբ ուրախացնում են թշնամիներին, իսկ հաշտութեամբ՝ «թշնամին փութով կործանի».

*Մեղաք աստուծոյ, եղբայրք,  
Ի միմեանց շատ վատ ասացաք,  
Թէ չէր աստուծոյ խնամքն,  
Մեք վաղուց կորուսեալ էաք:  
Նույն տեղում, էջ 232*

Շարունակելի  
Կարդան ԵՂԻՍԱՅԻՍԻ  
Բանասիրական գիտ թեկնածու, դոցենտ

Սկիզբը՝ էջ 5

Օշականը գիտե, որ պետական գործիչները ծնվում են հենց նույն ժողովրդից, ուրեմն զավթող առաջնորդների ժողովուրդը պետք է փառաբանի նրանց: Սա Օշականի ամենացավոտ վերջն է, եւ որքան ցավոտ է մորմոցում այն, այնքան ավելի անխնա է դառնում նրա գրիչը: Եվ եղերեգուն դիմում է անեծքի փիլիսոփայությանը. «Ու մեր եղերեգը նորէն քեզի կու գայ, ըստ վրայէր իջնալու համար ըստ ցեղիդ, որ հանդուրժեց - չըսելու համար փառաբանեց - ոճիրներուն ամենէն անորակելիին» (էջ 9):

«Կայսերական յաղթերգութիւն» շարքն առաջին տպավորությամբ միայն կարող է թվալ սոսկ նկարագրությունների, անձնական պարունակների, հույզերի ու խոհերի համապատկեր: Տողերի արանքում, սակայն, նկատելի են Օշականի քաղաքական վերլուծություններն ու դատողությունները: Օշականը Հայոց եղեռնը դիտարկում է որպես նահատակ ժողովրդի շարունակ կրկնվող արյունալի պատմության դրվագներից մեկը: Ու երբ փորձում է գտնել կոտորածների, գրկանքների եւ կորուստների պատճառը այն երկրի, որ «դարերու ընթացքին, օր մը անգամ չէ սաւառնած մարդ մորթելու հրեշտակները» (էջ 25), բայց «ուրկէ դարբ դար, երբեմն տարիէ տարի կրակի ու արիւնի թաթառը կ'անցնի» (էջ 26), ի վերջո եզրակացնում է. «Մեր ցեղը չի հեզներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն անելի մեղքած է» (էջ 10): Առաջաբանում հայի հոգեկերտվածքը բնութագրող արտահայտությունները մասնակիանում են պատվածքներում. եղեռնական պատկերները զուգորդվում են հարցադրում-դատողություններով: Անկառն է, որ շարքի բոլոր պատմվածքները կապված են միմյանց ոչ միայն նյութի տրամաբանությամբ, այ-

լեւ հայ մարդու հատկանիշների բնութագրումների շարունակությամբ:

Խորհրդահայ գրականության առանձնահատկությունների մասին խոսելիս գրականագետ Ժ. Քալանթարյանը հետաքրքիր մի փաստ է առանձնացնում, ինչը բնորոշ է նաեւ Օշականին. «... Ոճրագործի բացահայտ առկայության դեպքում անգամ գրողները փորձում են գտնել ոչ միայն շարքի պատճառները, այլեւ մեղավորին ու մեղքի աղբյուրը» (ժենյա Քալանթարյան, Եղեռնի անդրադարձի առանձնահատկությունները 1920-1930-ական թթ. խորհրդահայ գրականության մեջ, էջ 141): Դեռեւս 1910-ական թթ. Չարենցի հնչեցրած «Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր»// Կախվել մեր գլխին այսպես կուրորեն...// Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր - // Կյանքը դարձնում նզովյալ գեհեն» (Եղիշե Չարենց, Դանթեական առասպել, Ընտիր երկեր, էր., 1955, էջ 6) հարցերն Օշականի տարբեր պատմվածքներում ստանում են իրենց պատասխանները:

(Օշականի ինքնատիպ ոճի արտահայտություններից է նաեւ միեւնոյն ստեղծագործության մեջ տարբեր ժանրերի համադրումը: Մեր խնդիրն է ներկայացնել գրողի եղեռնապատումի առանձնահատկությունները, ուստի ժողովածուի ժանրային խնդիրներին չենք անդրադարձել): Արդարության որոնման ճանապարհին գրողը երբեմն չարանում է աշխարհի ու իր ազգի վրա, եւ այդ չարության արտահայտությունն են դառնում, թեեւ հեզանքով ասված, երբեմն ծայ-

# ԵՂԵՐՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱԿՈՐ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ



րահեղացված մտքերը, ինչպես օրինակ՝ մենք ծնվել ենք «Երկրի մը մէջ, ուր այդքան անվրդով երազելու համար մարդիկ արծիւ ծնելու չափ խելացի չէին եղած» (էջ 98): Գրողը հայ ժողովրդի պատմությունը գնահատելիս հանդես է գալիս սթափ քննադատությամբ: Նա պատճառները որոնում է ոչ միայն արտաքին թշնամու քաղաքականության մեջ, այլեւ վրիպումներ եւ բացթողումներ է մատնանշում ազգային կյանքում. «Մեր իմաստությունը կարճատես է, ու յուսահատությունը միշտ ալ անիմաստ չէ եղած»: «Հայրենի հեքիաթներէն» եւ «Մա՛յր սուրբ» պատմվածքներում Օշականը մատնացույց է անում մեր պատմիչներին եւ գուսաններին (այս խնդրին հետագայում՝ 1939 թ., Էպոսի 1000-ամյակի կապակցությամբ «Մեր պատմիչները եւ գուսանները» բանաստեղծությամբ անդրադարձել է նաեւ Ավ. Իսա-

հակյանը), ովքեր սերունդներին առավելապես մեր խեղճությունն ու թշվառությունն են ներկայացրել: Ազգապահպանության գործում կարեւորելով հոգեւորականության դերը՝ Օշականը, այնուամենայնիվ, մեր հալածանքների պատճառները քննելիս ընդգծում է նաեւ նրանց մեղքը: Իսկ այն, որ հոգեւորականները մեր մորթելու պատճառները համարել են «վասն ծովացեալ մեղաց մերոց», Օշականը պատասխանում է հարցով՝ ո՞րն է ավելի մեղք. մորթե՛լը, թե՛ մորթվելը: Բացվում են հայ ժողովրդի պատմության այլ ցավոտ կողմեր եւս: Օշականը խորհում է սոցիալական հարցերի շուրջ, որտեղ պարզորոշ երեւում է հայ ժողովրդի հայացքն աշխարհի նկատմամբ. «Իմ առջեւ եր իմ ժողովուրդը, որ օտարին յարդի շիւղն իսկ աչքը չունէր, մորթուելու արժան դառնալու համար: Այդ մարդերը իրենց արտին ու

պարտեզին, օրուան հացին ու գաւակներուն հոգէն անդին ուրիշ մտածում, ախորժակ չունեցան: Անոնք աս աշխարհէն մէկ բան միայն հասկցան,- աշխատանքն էր ատիկա» (էջ 188): Բայց Թումանյանի «Միշտ մի աղետ, մի վնաս գալիս են մեզ անպակաս» խոսքերը հաստատում է նաեւ Օշականը. «Բանեցան: Դատեցան, որպէսի տան թագաւորին, բռնաւորին, վաշխառուին» (տուն տեղում): Անտարբերություն, անիրավություն, միասնական պայքարի բացակայություն. մեզ բնորոշ հատկանիշներ, որից էլ ծնվում է Աստծո անտարբերությունը. «Ու տակաւին Աստուած չի գիտեր, թէ հոս մարդը կը մեռնի, ազգեր սուրբ կ'անցուին, մանուկները ողջ-ողջ կը թաղուին ու կիներու արգանդէն կենսաւորուող միսերը դանակներու ծայրը կը գամեն» (Յակոբ Օշական, Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 354): Մեզ բաժին էր ընկել այս ճակատագիրը, «որովիտեւս այնքան կը զբաղիմք մենք մեզմով» (տուն տեղում, «Ինչո՞ւ կը մեռնիս»): «Վրդովուած խղճմտանքը» պատմվածքում, պատկերելով հայ գյուղացիների ձերբակալության մի դրվագ, նա գրում է. «Մեկիկ-մեկիկ դուրս կանչեցին զարմացած գեղուկները, որոնք առանց շրթունք շարժելու, թողուցին որ զոյգ-զոյգի կապեն իրենց ձեռքերը իրենց իսկ տունին չունաներով» (էջ 20)՝ փոխարենը ընդդիմանալու եւ ըմբոստանալու: Օշականի համար գյուղացիներից յուրաքանչյուրն ունի մեղքի իր բաժինը:

Շարունակելի  
Մարինե ՀԱՅԱՐՅԱՆ

Սկիզբը՝ էջ 6

Հատկապես հիշատակվում է 14-րդ դարի ահեղ նվաճող Լենկ-Թեմուրի կատարած ոճրագործությունը, որը 1387 թ. գրավել ու թալանել է վանքը: Իսկ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում վայրենաբարո Եմին փաշան ասպատակել է Մշո դաշտի բնակավայրերը, գրավել է Ս. Կարապետ վանքը եւ հիմնավորապես թալանել այն: Արվեստի հազվագյուտ գործեր (որմանկարներ եւ այլն), արժեքավոր ձեռագիր մատյաններ հրո ճարակ են դարձել: Լենկ-Թեմուրի հրոսակների վանդալիզմը հասել է այնտեղ, որ վայրենի մոլուցքով անգամ կոտորատել են վանքի բակում տեղադրված անգուգական խաչքարերը:

19-րդ դարի վերջերից Ս. Կարապետ վանքն ակտիվ դերակատարություն է ստանձնում արեւմտահայ ազգային-ազատագրական շարժման մեջ: Վերոնշյալին նպաստում է այն հանգամանքը, որ վանքի վանահայրությունը ստանձնում է ազգային մտածողությամբ օժտված այնպիսի վառ անհատականություն, ինչպիսին Վարդան վարդապետն էր: Նա՝ Վարդան Ժ. վրդ. Հակոբյանը, իր ազգաշահ գործունեությամբ, հայոց ազգային, հոգեւոր, պատմական արժեքներին անսահման նվիրվածությամբ նշանակալից հետք է թողել Հայոց Եկեղեցու եւ ազատագրական շարժման էջերում: Նրա անվան

# ՏԱՐՈՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՎ ԿԵՐՁԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՌՎՁՆՈՐԴԸ...



հետ են կապված շուրջ երկու տասնամյակ ընդգրկող (1895-1915 թթ.) մի դրամատիկ, հուզախառով դարաշրջանի պատմական անցուդարձերը: 1895 թվականին նա ստանձնում է Մշո Ս. Կարապետ վանքի վանահայրությունը եւ մինչեւ իր ողբերգական մահը մնում իր դիրքում ու պաշտոնում՝ երբեք չմտածելով իր հոտն ու իր ժողովրդին լքելու մասին: Վարդան վարդապետը, դժոխակ ճակատագրի կամքով, եղավ Տարոն աշխարհի վերջին առաջ-

նորդը եւ ողջակիզվեց իր հավատացյալ ժողովրդի հետ միասին՝ երիցս դժնդակ 1915 թվականին: Լինելով մաքուր եւ պայծառ եուլթյուն՝ նա հոգեւոր իշխանության բարձր պաշտոնում ազնվորեն եւ անմնացորդ ծառայեց իր ժողովրդին, եռանդուն կերպով կատարեց հոգեւոր բոլոր ծեսերն ու ծառայությունները՝ ի հեճուկս իր առջեւ ծառայած տնտեսական, նյութական գրկանքների, քաղաքական ճնշումների եւ հետապնդումների:

Ո՞վ էր նա՝ այդ հանդուգն վարդապետը, որտեղից էր սերում: Վարդան Հակոբյանը ծնվել է 1846 թ. Սասունի Խուլբ գավառակի Ահրոնք գյուղում՝ սույն տարածքում հայտնի իշխան Դանիելի գերդաստանում: Ահրոնք գյուղը նույնպես նշանակալից դեր է կատարել հայ ազատագրական շարժման մեջ: Ահրոնք գյուղում բնակվում էր 80 տուն հայ ընտանիք:

Փոքրիկ Վարդանը սովորել է Մշո Ս. Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանում, որն ավարտելուց հետո դառնում է այդ վանքի միաբանության անդամ: 1880 թ. նա Ս. Կարապետ վանքի այդ ժամանակվա վանահայր Մամբրե Եպիսկոպոս Մամիկոնյանի կողմից ձեռնադրվում է նույն վանքի վարդապետ: Ապա կրթական եւ վարչական պաշտոն է ստանձնում ժառանգավորաց վարժարանում 1880-1883 թվականներին: Իսկ 1883 թ. նշանակվում է Գեւջի նորաբաց առաջնորդության տեղապահ: Այդ պաշտոնում նա չխնայեց ուժերն ու եռանդը հասարակության համար օգտակար ձեռնարկներ կատարելու ուղղությամբ՝ հատկապես կրթական ասպարեզում: Գեւջի եւ Խուլբի

ենթաշրջանում նրա ուժերով եւ «Դպրոցասիրաց միացյալ ընկերության» աջակցությամբ բացվում են նախակրթարան-վարժարաններ: Ապա գալիս է նոր փորձության ժամը...

Շարունակելի  
Արմեն ԿԱՐՎՊԵՏՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**  
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Վիճակագրական խմբագիր՝**  
Աստղիկ Ստամբոլյան

**Գրանցման վկայական՝ 624**  
Խմբագրության հասցեն՝  
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

Էլ. փոստ՝ arishay@etchmiadzin.am  
astghikstam@gmail.com

**web կայք՝**  
krishayas.wordpress.com  
Ստոր. տպագր. 1.12.2016 թ.

**Տպաքանակը՝ 2100**  
Գինը՝ 50 դրամ